ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

25 հունիսի 2024 թվական

2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 13.52

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 20 անդամ՝

Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Պեդրո Զարոկյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արմենակ Դանիելյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հարոյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Նատալյա Սինորյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Անուշ Գինոսյան՝ Երևանի ավագանու անդամ,
Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արմեն Քոչարյան՝«Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հակոբյան՝«Մայր Հայաստան» խմբակցություն,
Դիանա Քերոբյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Արմեն Մկրտչյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Քրիստինե Վարդանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Լուսինե Սարգսյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Գևորգ Ստեփանյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Տիգրան Ավինյան

Առաջին հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-Ս.թ. ապրիլի 16-ին տեղի ունեցած Երևանի ավագանու նիստի ժամանակ ես հարց բարձրաձայնեցի կապված ասֆալտաբետոնյա ծածկի նորոգման աշխատանքի տեխիսկողության վերաբերյալ. Դուք հաստատեցիք, որ այդտեղ կան լուրջ խնդիրներ և հանձնարարեցիք, որ զբաղվեն այդ հարցով: Արդեն անցել է երկու ամիս և ես ուզում եմ իմանալ թե ի՞նչ փոփոխություններ են իրականացվել այդ ոլորտում: Ի՞նչ աշխատանքներ է կատարվել և ո՞ր փուլում է գտնվում այդ աշխատանքները:

Տիգրան Ավինյան

-Բարձրաձայնված հարցի հետ կապված տեղեկացնեմ, որ ունեցել ենք տեխիսկողության մի քանի պայմանագրերի խզզում, մասնավորապես՝ այն հիմնավորմամբ, որ տեխիսկողության պայմանագրերը և տեխիսկողներն մեզ գցել են որոշակի մոլորության մեջ և եղել են սև ցուցակում հայտնված ընկերությունների հետ փոխկապակցված: Ձեր կողմից բարձրաձայնված հարցը գնումների օրենսդրությանը վերաբերող հարց է: Մասնավորապես, շատ դեպքերում վերաբերում է տեխիսկողությանը: Մենք ձևակերպել ենք որոշակի առաջարկներ, որոնք պետք է ներկայացնենք ՀՀ ֆինանսների նախարարություն: Նշեմ, որ գնումների օրենսդրությունը պարբերաբար վերանայվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Այստեղ կարելի է ասել միայն Երևանի քաղաքապետարանի խնդիրը չէ. Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում գրեթե բոլոր գերատեսչություններն ունեն խնդիր և մենք այս մասով որոշակի լուծումներ առաջարկել ենք:

Գրիգոր Իսկանդարյան

-Երևանի քաղաքապետարանը հնարավորություն ունի այդտեղ շտկումներ իրականացնել և Դուք ինձ հստակ հանձնարարեցիք, որ քաղաքապետարանի աշխատողները զբաղվեն այդ հարցով և ինձ էլ տեղյակ պահեն: Հիմա ես ինքս փորձել եմ հետաքրքրվել, որևէ մեկի հետ կապնվել չի ստացվել, փորձեմ անուններ չհնչեցնել:

Տիգրան Ավինյան

-Հնչեցրեք, որպեսզի հստակ պատասխան տանք:

Գրիգոր Իսկանդարյան

-Ես 3-4 անգամ փորձել եմ կապ հաստատել քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի հետ: Նա անընդհատ զբաղված է եղել և իմ հետ հետադարձ կապ չի հաստատել: Ես ցանկանում էի հասկանալ, որ փուլում է այդ գործընթացը: Հիմա ես հասկանում եմ, որ ընդհանրապես ոչինչ չի կատարվել, այնտեղ պետք է ընդամենը կարդալ «Գնումների մասին» օրենքը և ՀՀ կառավարության որոշումը

և ըստ դրա այդ պայմանագրերը կազմել և գործը մոտավորապես 60-70%-ով կլուծվեր:

Տիգրան Ավինյան

-Պարոն Իսկանդարյան, Դուք երևի խոսում եք տեխնիկական առաջադրանքների և ոչ թե պայմանագրերի մասին: Ես առաջարկում եմ, այս հարցը ավագանու նիստից հետո քննարկել աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի հետ:

Պարոն Հարությունյան այսօր այս մասին կզեկուցեք ինձ:

Գրիգոր Իսկանդարյան

-Երկրորդ հարցս հետևյալի մասին է. տեխհսկողության հսկողությունը կամ վերահսկողությունը ներկայումս աշխատակազմի ֆինանսական վարչության փոխարեն իրականացվում է աշխատակազմի շինարարության և բարկարգման վարչության կողմից: Սա նշանակում է, որ այդ վարչությունը պետք է իրականացնի շինարարի գործունեության և տեխհսկողություն իրականացնողի նկատմամբ հսկողություն: Այստեղ ստացվում է շատ խառը պատմություն: Ուստի՝ աշխատանքները լինելու են այդպիսին ու չենք իմանա բացի քաղաքային իշխանությունից, ո՞վ է մեղավոր քաղաքում այսքան շատ փոսերի առկայության համար: Ինչո՞ւ եք բոլոր տեխհսկողության հսկողական և վերահսկողական գործառույթները տվել նույն վարչությանը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն, մենք ունեցել ենք մի մոդել, որտեղ տեխհսկողության հատվածը եղել է աշխատակազմի ֆինանսական վարչության լիազորության ներքո: Այդ մոդելը ժամանակին արդյունավետ չի համարվել՝ ունենալով որոշակիորեն վերահսկողական ֆունկցիա և՛ֆինանսական վարչությունում, և՛ շինարարության և բարկարգման վարչությունում: Հետևապես, ամբողջ պատասխանատվությունը տրվել է շինարարության և բարեկարգման վարչությանը:

Գրիգոր Իսկանդարյան

-Պատասխանատվությունը դարձյալ շինարարության և բարկարգման վարչությանն է լինելու, որովհետև տվյալ վարչությունն է գործը վերահսկողը, բայց խնդիրը կայանում է նրանում, որ հակակշիռ արդեն չի լինում: Այսինքն, եթե տեխհսկողության գործառույթը թեկուզ այդ առումով տրվի այլ վարչությանը, որը կկատարի վերահսկողությունը կամ տեխհսկողությունը կկատարի այլ վարչություն այդտեղ ավելի նպատակահարմար կլինի այդպես անել, որ հակակշիռ կլինի շինարարության և բարկարգման վարչությանը: Օրինակ՝ 2022թ. Աջափնյակ վարչական շրջանում հ.49 մանկապարտեզը վերանորոգել է «Կվալիտշին» ՍՊ ընկերությունը, որի կողմից իրականացվել են բակի բարեկարգման աշխատանքները: Ավարտական ակտը ներկայացվել է, տեխհսկողը ստորագրել է, բացի՝ Երևանի քաղաքապետարանից: Տվել են միայն գումարի մի մասը, մնացածը պարտք են: Սրա բացատրությունը եղել է՝ շինթույլտվություն չկա: Սա աբսուրդ է ու խնդիրը կայանում է նրանում, որ ես նաև այս հարցով ուզում էի հանդիպել շինարարության և բարկարգման

վարչության պետի հետ, սակայն այդպես հանդիպումը չկայացավ: Ընկերության տնօրենն այս հարցով դիմել է «Մայր Հայաստան» խմբակցություն և ներկայացրել է խնդիրները:

Հիմա չեմ կարողանում հասկանալ ինչո՞ւ չեք վերադարձնում այդ մարդու գումարը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հարությունյան, այս հարցն էլ կպարզաբանեք ու այսօր ինձ կզեկուցեք:

Արմեն Հարությունյան

-Շատ լավ, պարոն Ավինյան:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Երկու հարց ունեմ. առաջինն Ա.Մանուկյան 6/5 հասցում գտնվող բացօթյա ռեստորանային համալիրում հնչող բարձր աղմուկի վերաբերյալ է, այս հարցը նաև բարձրաձայնել ենք նախորդ նիստին ընթացքում: Հարևան շենքի բնակիչները հստակ գիտեն, թե որ պահին ռեստորանում ինչ է կատարվում: Այս ռեստորանային համալիրը քաղաքի կենտրոնում այդ ֆորմատով միակն է: Ակընկալում եմ այս հարցով հստակ գործողություններ կիրառվեն, որ գոնե ռեստորանի գործունեության ֆորմատը փոխվի, բիզնեսն աշխատի:

Ամենակարևոր հարցադրումը «Մայր Հայաստան» խմբակցությունը նախորդ ամիսների ընթացքում ներկայացրել է ավագանու որոշման տարբեր նախագծեր՝ հանրային տրանսպորտի, սպորտի ոլորտի, փողոցի անվանակոչության, հանձնաժողովների քվորումները 25-50% դարձնելու հետ կապված հարցերի վերաբերյալ և որևիցե նախագիծ մինչև այս պահը Երևանի ավագանու նիստի օրակարգ չի ընդգրկվել: Այնտեղ հղում է արվում քառամսյա ժամկետին, բայց վստահ ենք դա կամայական մեկնաբանության համար չէ, եթե ավագանու կողմից ներկայացված նախագիծը բոլոր ընթացակարգերն անցել է կարծում եմ, պետք է ընդգրկվի ավագանու նիստի օրակարգ: Հատկապես, որ այս նիստից առաջ տեղի ունեցած իրավական հարցերի հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված էր ընդհամենը մեկ հարց, որի ընթացքում աշխատակազմի հանրակրթության վարչության համապատասխան աշխատակիցը ներկայացրեց նախագիծը, ըստ որի՝ պարզ դարձավ, որ ներկայացված վերջին երկու մանկապարտեզը պետք է հանձնել վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը: Նաև պարզվեց, որ մանկապարտեզներից մեկը եղել է գիշերօթիկ և դադարել է որպես գիշերօթիկ՝ ծավալել գործունեությունը: Հարցնում ենք թե ի՞նչ պատճառով, աշխատակիցը պատասխանում է, թե չի տիրապետում այդ հարցին: Այսինքն այնպես չէ, որ հանձնաժողովների նիստերի ընթացքում բոլոր հարցերն ունենում են սպառիչ պատասխաններ և նորից եմ ուզում կրկնել նիստերը չեն լուսաբանվում:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Սուքիասյան:

Պարոն Գյուլզադյան, կխդրեի Ա.Մանուկյան 6/5 հասցեում գտնվող ռեստորանային համալիրում հնչող աղմուկի հարցի հետ կապված քաղաքապետարանի իրավասությունների շրջանակներում համապատասխան այցելություն իրականացրեք և արձանագրություն կազմեք: Այս մասով տեղեկացնեմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր նախագծով որոշակի փոփոխություններ ենք նախատեսում, նմանատիպ, պարբերաբար խախտումներ իրականացնող օբյեկտների հետ կապված որոշակի խստացումներ են նախատեսվում: Ինչ վերաբերում է Ձեր խմբակցության կողմից ներկայացված Երևանի ավագանու որոշումների նախագծերին, պարոն Սուքիասյան, դրանք բոլորը համապատասխան ժամկետներում ներկայացվում են քննարկման և կարծում եմ ընդհանուր առմամբ ընթացակարգը պահպանված է, եթե բովանդակային անհամաձայնություն էլ կա կարծում Դուք այդ մասին տեղյակ եք: Հետևապես, այն նախագծերին, որոնց կողմ ենք լինում, տրամաբանական ժամկետներում ընդգրկվում են օրակարգում: Նման նախագիծ, եթե չեմ սխալվում «Ազգային առաջընթաց» խմբակցությունն էլ է ներկայացրել և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը կողմ է քվեարկել: Այն նախագծերին, որոնց որ դեմ է քվեարկում՝ դիրքորոշումն արտահայտում է:

Մանուկ Սուքիասյան

-Այս պահին պետք է արձանագրենք. օրինակ, եթե մեր խմբակցության կողմից ներկայացված է փողոցի անվանակոչության կամ հանձնաժողովների քվորումների վերաբերյալ նախագծերը, ընթացիկ աշխատանքային նախագծեր են: Մեզ համար շատ էական է հանրային տրանսպորտի վերաբերյալ մեր խմբակցության կողմից ներկայացված նախագիծը, որը մինչ օրս ուշադրության չի արժանացել և օրակարգ չի ընդգրկվել տարակուսանքի տեղիք է տալիս: Հատկապես այս պահին իշխող կոալիցիայի նախագիծը, որը դեռևս գործունեության մեջ է և պարբերաբար հետաձգումներ կան, եթե որևիցե անհանգստացնող հարց չկա այդ նախագիծը կարող էր ընդգրկվեր օրակարգ: Այսպիսով, հանրությանը անհրաժեշտ է ներկայացել հանրային տրանսպորտի ոլորտում մեր խմբակցության չափումները, տեսումները, գնագոյացման վերաբերյալ ունեցած մեր տեղեկատվությունը, «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության կողմից և այլ ուղղություններով վատնումները, վատ կառավարման հետ կապված հարցերը: Այս պարագայում մեր խմբակցությունը միտում է տեսնում, որ այս խնդիրները չարծարծվեն:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Սուքիասյան, ուզում եմ հիշեցնել, որ հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի վերաբերող հարցը, երկու անգամ մի քանի ժամ քննարկվել է Երևանի ավագանու նիստի ժամանակ և բոլոր մանրամասներին

գրեթե անդրադարձ եղել է: Ձեր կողմից մատնանշված նախագծի վերաբերյալ ավագանու մյուս խմբակցությունները և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իրենց դիրքորոշումները հայտնել են:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Պեդրո Զարոկյան, խնդրեմ:

Պեդրո Զարոկյան

-Շնորհակալություն, անցած ամիս ես անդրադարձել էի Նորք-Մարաշ վարչական շրջանից դեպի Նոր Նորք վարչական շրջան տանող ճանապարհի փոսերին: Երևանի քաղաքապետարանն իմ անդրադարձից մի շաբաթ հետո ասֆալտապատեց, բայց անձրևից հետո այդ փոսերը կրկին առաջացան: Հիմա ես չգիտեմ դիտմամբ ե՞ք այդպես աշխատում, որ վարորդները ձեզանից դժգոհեն: Նույն խնդիրը երկու տարի առաջ եղել է Արմենակյան փողոցում, ես իմ միջոցներով այդ հատվածն ասֆալտապատել եմ: Գոնե ասֆալտապատելուց առաջ հիմք դրեք, որ հետո նման փոսեր չառաջանան:

Հիմա ուզում եմ անդրադառնալ ավելի լավ լուրի.Նորք-Մարաշ վարչական շրջանում ստեղծվել է աղջիկների բասկետբոլի անվճար ակումբ: Սա շատ լավ միտում է, հուսով եմ հետագայում այդ ակումբը կլինի նաև տղաների համար և ճիշտ կլինի, որ այս ծրագիրը լինի նաև մնացած վարչական շրջանների դպրոցներում, որոնք ունեն մարզադահլիճներ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Զարոկյան այն տրամաբանությամբ, որ փոսալցման աշխատանքները իրականացվում են, ինչպիսիք են փոսի կտրման և հիմնային փոսալցման աշխատանքները, իրականացվում են այն փողոցներում, որտեղ միջին նորոգման աշխատանքներ նախատեսված չեն: Ձեր կողմից մատանշված խնդիրները վերաբերում են այն փողոցներին, որտեղ Երևանի քաղաքապետարանի ծրագրով պետք է իրականացվեն միջին նորոգման աշխատանքներ: Միջին նորոգման աշխատանքներ արդեն իրականացվել են օրինակ՝ Գալշոյան և շատ այլ փողոցներում: Հիմնական խնդիրը եղել է այն, որ պարբերաբար եղանակների հետ կապված աշխատանքները հետաձգվել են:

Պարոն Հարությունյան, պետք է խնդրեմ, որ բարձրաձայնեք այն փողոցների անունները, որտեղ ենթադրվում է, այս տարի միջին նորոգման աշխատանքներ են իրականացնել:

Արմեն Հարությունյան

-Պարոն քաղաքապետ, մատնանշված Արմենակյան փողոցն այս պահին միջին նորոգումների աշխատանքների փուլում է, տեղի է ունենում ասֆալտբետոնյա ծածկի ֆրեզավորման աշխատանքներ: Համատեղ աշխատում ենք «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ՝ այդ հասցեում ջրատար են կառուցում, որից հետո քաղաքապետարանի կողմից կիրականացվի միջին նորոգման աշխատանք: Նորք-Մարաշ վարչական շրջանում միջին նորոգման ծրագրի շրջանակներում ընդգրկված են Արմենակյան, Իսաբեկյան,

Բաղդասարյան փողոցները: Նշեմ, որ միջին նորոգման աշխատանքները սկսվել է Նոր Նորք վարչական շրջանի չորս փողոցնում: Այնուհետև, աշխատանքներն իրականացվել են Նորք-Մարաշ վարչական շրջանում: Այժմ աշխատանքներն ընթանում են էրեբունի վարչական շրջանում, մասնավորապես,Այվազովսկու փողոցում կատարվել է ֆրեզավորման աշխատանքներ, այս պահին իրականցվում է դիտահորերի բարձրացման աշխատանքները, որից հետո կիրականացնենք ասֆատբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքները: Նոր Նորք վարչական շրջանի Բաղյան, Ն.Ստեփանյան, Թոթովենցի, Վիլնյուսի, Հ.Ավետիսյան, Գալշոյան և Գյուրջյան փողոցից դեպի Իսաբեկյան փողոցի հատվածում կատարվել են միջին նորոգման աշխատանքներ: Զուգահեռաբար, ինչպես նշեց քաղաքապետը, այն փողոցները, որոնք ենթակա չեն միջին նորոգման, իրականցվել են փոսալցման աշխատանքներ: Պետք է նշեմ, որ որոշակի առումներով կապված տեխնիկական հսկողության խնդրի հետ, փոսալցման աշխատանքները դադարեցվել էին, բայց այսօրվանից վերսկսվելու են: Նաև հավելեմ, որ նախատեսել ենք փոսալցման աշխատանքների մրցույթի նոր ծավալ, այսպիսով կարծում եմ, որ այս հարցը Երևան քաղաքում ամբողջությամբ կկարողանանք ավարտել:

Պեդրո Զարոկյան

-Պարոն Ավինյան, ժողովրդին չի հետաքրքրում, թե ինչ տեսակի նորոգում է իրականացվում, ճանապարհը նորոգեք, որ վարորդները կարողանան երթևեկեն: Դ.Բեկի փողոցում մեկ ամիս է արդեն փոս կա, ճանապարհը բաժանվել է երկու մասի, մինչ այսօր Դ. Բեկի փողոցի երկու գիծը փակ է: Մարդիկ ամեն օր պետք է աշխատանքի գնան. Դուք չեք խնայում ու գնահատում իրենց գումարն ու ժամանակը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Զարոկյան, եթե մենք չգնահատեինք այն ժամանակը, որ մարդիկ ծախսում են ճանապարհների վրա, ապա Դ.Բեկի փողոցը հրատապ խնդրի կարգավորման ընթացակարգի մեջ չէր ներառվի, այլ կիրականացվեր մրցութային ընթացակարգով: Քանի որ գիտակցում ենք, որ դա հրատապ լուծման խնդիր է և շատ արագ ընթացակարգով իրականացնում ենք այդ հատվածի հիմնանորոգումը: Ցանկանում եմ հատուկ շեշտել, որ այդ ենթակառուցվածքը շատ մաշված է և դիմացի հատվածում նույնպես ունենք խնդիր և շահագործումը կարող է լինել առանց հիմնանորգման ևս յոթ-ութ տարի, հետևապես պլանավորում ենք գալիք մեկ-երկու տարվա ընթացքում հարակից հատվածում էլ իրականացնել հիմնանորոգում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

-Շնորհակալություն, երկու հարց ունեմ. Առաջինը վերաբերում է Էրեբունի վարչական շրջանին, մյուսը՝ Ձեզ, պարոն Ավինյան:

Պարոն Բալայան, հարցս վերաբերում է Մուշական թաղամասին, ուզում եմ անդրադառնալ երեք խնդրի և ակնկալում եմ Ձեր պատասխանը խնդիրների լուծման վերաբերյալ.

Ինչպես ե՞ք անելու և ի՞նչ ժամկետներում: Նշված թաղամասի սեփական տների /կոնկրետ առաջին, երրորդ, չորրորդ/ նկուղներում ջուր է կուտակվում: Այս խնդիրը կա վաղուց և խնդրի մասին նաև տեղյակ են եղել նախկին քաղաքապետերը, կարծում եմ Դուք էլ եք տեղյակ: Կարող եմ ցույց տալ Ձեզ նկուղի նկարները, այնտեղ մինչև գոտկատեղ ջուր է կուտակվում, մարդիկ պոմպերի միջոցով հավաքում են ջուրը, բայց րոպեներ անց կրկին շատ ջուր է կուտակվում: Ջուրը այնքան է բարձրանում, որ հասնում է տուն և տան պատերը կիսով չափ թրջվում են: Այս խնդիրն այսպես մնացել է և լուծում չի ստացել: Հիմա ուզում եմ հասկանալ այս խնդրի հետ կապված ի՞նչ եք պատրաստվում անել կամ արդյոք պատրաստվում եք ինչ-որ գործողություն իրականացնել: Նշեմ, որ քաղաքացիները ջրի կուտակման պատճառները գիտեն և նաև այդ խնդրի լուծման առաջարկներ էլ ունեն: Պատճառը բնածին է, բայց նաև արհեստածին գործոն էլ կա, որովհետև, ըստ իրենց, այնտեղ եղել է որոշակի տարածք, որը ծածկվել է և դրանից հետո ստորգետնյա ջրերը սկսել են բարձրանալ վերև: Սա այս թաղամասի առաջին խնդիրն է, ցանկանում եմ իմանալ ի՞նչ եք պատրաստվում անել այս ուղղությամբ:

Ցանկանում եմ նշել, որ եթե Դուք այցելեք այս թաղամաս, ես ևս պատրաստ եմ Ձեզ հետ գալ և հանդիպել բնակիչների հետ, լսել խնդրի լուծման իրենց տարբերակները: Այդ թաղամասում կա նաև մեկ այլ խնդիր՝ կապված թունաքիմիկատների հետ: Շատ վաղուց այդտեղ թունաքիմիկատներ է թաղվել: Ժամանակի ընթացքում այդ թունաքիմիկատները բարձրացել են վերև և հիմա քամու ժամանակ դրանք տարածվում են այդ տարածքում: Պարզ է, որ դա ինչպիսի վատ առողջական հետևանքներն կարող է ունենալ մարդկանց համար, ամենաթեթև վնասն ալերգիան է, որն այդ տարածքի բնակիչները միշտ ունենում են: Իրենք խնդրել են, որ այս հարցը նույնպես լուծվի: Մյուս խնդիրն էլ վերաբերում է այդ թաղամասի կոյուղագծին, որն անցած տարի է կառուցվել, բայց այն այդպես էլ չի գործում, այսինքն՝ կոյուղագիծը կառուցվել և ասֆալտով ծածկվել է: Մարդկանց տներից դեպի կոյուղագիծ միացումներ չկան: Մարդիկ հարցնում են, թե ե՞րբ են կատարվելու կոյուղագծերի միացման աշխատանքները և եթե խոստացել են, ինչո՞ւ մինչև վերջ չեն կատարում իրենց գործը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ պարոն Դանիելյան: Այո՛, Մուշական թաղամասում կուղագծի ծրագիրն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ես անձամբ երկու անգամ եղել եմ այնտեղ: Պարոն Բալայան կխնդրեի անդրադառնաք հարցին: Նաև պետք է տեղեկացնեմ, որ այդ թաղամասում դա Երևանի քաղաքապետարանի կողմից անցյալ տարի կատարված բացառիկ հիմնարար ծրագրերից մեկն է:

Հակոբ Բալայան

-Պարոն Դանիելյան, պետք է տեղեկացնեմ, որ Մուշական թաղամասում կառուցվել է 4,5 կմ կոյուղագիծ: Հիմա խնդիրը կայանում է նրանում, որ կատարված աշխատանքները պետք է ընդունի «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունը, որպեսզի բնակիչների տներից կոյուղագծի միացումները կատարվեն: Ես երեկ խոսել եմ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության տնօրինության հետ, ինձ տեղեկացրեցին, որ շուտով պետք է ընդունեն կատարված աշխատանքները:

Ինչ վերաբերում է Մուշական թաղամասի տների նկուղներում ջրերի կուտակման խնդրին, առաջինը՝ դրանք ընդերքային ջրեր են: Մենք նախկին քաղաքապետի հետ այցելել ենք այդ թաղամաս և հայտաբերել, որ խնդիրն ընդերքային ջրերից է: Այդ մասին գրություն է ուղարկվել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, որպեսզի հասկանանք ինչ պետք է անել: Պետք է նշեմ, որ ճիշտ է մինչև պահն հարցը չի լուծվել, որովհետև դա ընդերքից լցվող ջրեր են: Խնդիրը վերաբերում է այն վեց տներին, որոնք կառուցված են փոսի մեջ, որտեղ վերևում կան ջրերի պաշարներ և առաջացնում են այս խնդիրը: Ես հանդիպել եմ բնակիչների հետ, իրենք հասկանում են, որ իրականում դա լուրջ խնդիր է, որ իրենք էլ իրենց մեղավորություն՝ տները փոսում կառուցելու պատճառով: Պետք է նշեմ, որ դեռ լուծման պատասխանը չունենք, որովհետև դա երկար ուսումնասիրության խնդիր է:

Ինչ վերաբերում է թունաքիմիկատների հետ կապված խնդրին, ապա այն ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը միշտ հսկողության տակ է պահում: Այդ հարցը վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գործառույթներից դուրս է: Տարածքն ոստիկանության 24-ժամյա հսկողության տակ է և վերահսկվում է պետության կողմից: Նշեմ, որ բնակչությանը դեռ որևէ վտանգ չի սպառնում:

Արմենակ Դանիելյան

-Պարոն Բալայան, չեմ հասկանում ոստիկաններն ի՞նչն են վերահսկում, բայց իմ հարցն այդ խնդրին հստակ լուծում տալու մասին է: Ինչպես օրինակ՝ այդ թունաքիմիկատների վրա նոր լիցք լցնեն, որպեսզի փոշին չբարձրանա և այդ օդը չվնասի բնակչությանը: Գուցե ոստիկանները վերահսկում են տարածքը, բայց փոշու հարցն իրենք չեն կարող լուծել:

Ինչ վերաբերում է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված պատասխանին՝ թաղամասի կոյուղագծերի խնդրի վերաբերյալ, շուտովը պատասխան չի, մեկ տարին էլ է՝ շուտով: Ես կարծում եմ, որ իրենց պետք է պարտադրել ինչ-որ մեխանիզմներ գործարկեն, որպեսզի մարդիկ կարողանան օգտվել կոյուղուց:

Անդրադառնամ մյուս հարցին՝ նաև կապված այդ տարածքի ընդերքի ջրերի հետ. բնակիչները կասկածում են, որ այդ ջուրը կուտակվել է տների դիմացի փոսը ծածկելու պատճառով, քանի որ փոսը ծածկելուց հետո է առաջացել այդ խնդիրը: Բնակիչները կասկածում են, որ դա գետ է և հունը փոխվելու պատճառով, ջուրը հավաքվում և

բարձրանում է վերև: Բնակիչներն այս խնդրի լուծումներից մեկն առաջարկում են, որ փոսը նորից փորվի կամ այդ փոսի լցված պարունակությունը նորից հանվի: Վերջինս կարող են լցնել այդ թունաքիմիկատների վրա, այսպիսով կարող են լուծել միանգամից երկու հարց:

Տիգրան Ավինյան

-Տիկին Հայկազյան, պետք է խնդրեմ, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ համատեղ անդրադառնաք այս տարածքի և Էրեբունի վարչական շրջանի թունաքիմիկատների խնդրին, որն ավելի մեծ մասշտաբներ ունի և մենք էլ այս հարցերով ավելի պրոակտիվ լինենք:

Սիրարփի Հայկազյան

-Շատ լավ պարոն Ավինյան:

Արմենակ Դանիելյան

-Պարոն Ավինյան երկրորդ հարցս ապրիլ ամսվա ընթացքում տեղի ունեցած Երևանի ավագանու հարց ու պատասխանի ժամանակ բարձրաձայնել եմ: Հիմնա կրկին ցանկանում եմ անդրադառնալ Գ.Նժդեհի 56ա հանրակացարանային շենքի հետ կապված հարցին: Նշեմ, որ շենքը 52 տարվա մետաղակոնստրուկցիաներով կառուցված շենք է: Պարզվում է այս շենքն ունի «կոնյակի» հատկություն՝ ժամանակի ընթացքում շենքի կարգավիճակն անհասկանալի կերպով բարձրանում է: Նախորդ անգամ ես նշել էի, որ այդ շենքին նախկինում տրվել է չորրորդ, հետո երրորդ կարգի վթարայնության աստիճան: Ես գրությամբ դիմել էի Ձեզ, որ ինձ տրամադրեք շենքի չորրորդ և երրորդ կարգերի հիմնավորումները, տրվել է միայն 2016թ. պատասխան գրություն, բայց ես իմ միջոցներով ձեռք եմ բերել Երևանի քաղաքապետարանի կողմից 2017թ. և 2020թ. տրված պատասխանները, որոնց օրինակները հետո կփոխանցեմ Ձեզ: Այստեղ շենքին տրված է չորրորդ կարգի վթարային աստիճան: Շենքի վիճակի բացատրությունը ևս տրված է, թե շենքում ինչ աշխատանքներ պետք է իրականացվի, որ շենքի կարգավիճակը դառնա երրորդ կարգ: Իրականում 2018թ. գարնանը շենքում աշխատանքներ կատարվել են, բայց այդ աշխատանքները մասնակի է իրականացվել: Այսինքն, առաջին հարկում կան առևտրային կազմակերպություններ, որոնց սեփականատերերը չեն թողել, որ նկուղում կատարվի ամրացման աշխատանքներ: Մասնակի այդ աշխատանքից հետո շենքին տրվել է երրորդ կարգի վթարային աստիճան: Այս մասով ես գրություն էի գրել, որպեսզի մեկ անգամ էլ շենքի վթարայնության վերաբերյալ փորձաքննություն իրականացվի, որի պատասխանը դեռ չեմ ստացել: «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հետ բանավոր խոսել եմ և ինձ տեղեկացրեցին, որը շենքին տրվել է երկրորդ կարգ: Ինչպե՞ս է ստացվում, որ մասնակի աշխատանքների արդյունքում շենքը չորրորդ կարգի վթարային աստիճանից ստանում է երրորդ կարգի վթարային աստիճան և վեց տարվա ընթացքում շենքում աշխատանք չիրականացնելուց հետո տրվում է երկրորդ կարգի վթարային աստճան: Այս

պատճառով բնակիչները Ձեզ դիմում-բողոք են գրել և պահանջում են, որ իրենց շենքի հարցը լուծվի և գրության մեջ կա նաև շենքի նկարագիրը: «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցները նկարագրել են, թե ինչ վատ վիճակում է գտնվում շենքը, շենքի նկուղը, կոնստրուկցիաները, տանիքը: Շենքի վիճակն այսպես մնալով ավելի վատ կլինի, բայց չգիտես ինչու շենքին տրվել է երկրորդ աստիճան վթարային կարգ: Խնդրում եմ կրկին անդրադառնալ այս շենքի հարցին: Շենքը բաղկացած է ութ հարկից, որտեղ երկու հարյուրից ավելի տնտեսություն կա: Այս հարցը չլուծելու դեպքում կարող է աղետալի հետևանքներ լինել, որի և՛ բարոյական և՛ իրավական պատասխանը շատ ծանր է լինելու: Այդ պատճառով խնդրում եմ այս հարցին լուծում տալ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, նշեցիք, որ շենքին սեյսմիկ վերջին տվյալներով երրորդ աստճանի վթարային կարգ է տրվե՞լ:

Արմենակ Դանիելյան

-Սույն թվականի հունիս ամսվա տվյալներով տրվել է երկրորդ կարգի վթարային աստիճան:

Տիգրան Ավինյան

-Ունե՞նք արդեն «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված այդ եզրակացությունը:

Արմենակ Դանիելյան

-«Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների ինձ ասեցին, որ պատասխանն ուղարկել են Երևանի քաղաքապետարան: Այս մասով ես գրություն եմ գրել, սակայն դեռ պատասխանը չեմ ստացել, իսկ այն ինչ նոր նշեցի, իրենց հետ բանավոր խոսակցության միջոցով եմ իմացել:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ, տվյալ եզրակացությունն ես անձամբ կկարդամ, որպեսզի հասկանամ համեմատական կարգով հիմնավորումները և եթե կարիք լինի կկազմակերպենք որպեսզի ևս մեկ փորձաքննություն իրականացվի:

Պարոն Դանիելյան, ուղղակի ցանկանում եմ հստակ նշել, որ բնակֆոնդի այսպես ասած «թարմացումը» մեր լիազորությունների շրջանակում չի, բայց մենք տվյալ դեպքում մեխանիկական լուծումներ ենք փորձում գտնել:

Պարոն Հարությունյան, Դուք ե՞ք պատվիրել շենքի փորձաքննությունը:

Արմեն Հարությունյան

-Այո, պարոն քաղաքապետ:

Տիգրան Ավինյան

-Կխնդրեի այսօր ինձ ներկայացնել այդ եզրակացությունը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հարոյան, խնդրեմ:

Սամվել Հարոյան

-Սիրելի՛ երևանցիներ, ավագանու հարգելի՛ գործընկերներ, եկեք փաստենք, որ մեր սիրելի Երևանն այսօր դարձել է շատ աղմկոտ: Իմ տարեկիցները կհիշեն, թե մենք ինչպիսի հանդարտ, գեղեցիկ Երևան ունեինք: Հանգստանալու համար դուրս էինք գալիս փողոց ճեմելու և հոգու հանգստությամբ վերադառնում էինք տուն: Այսինքն, աղմուկից փախչելու համար, դուրս էինք գալիս Երևանի փողոցներում զբոսնելու: Այսօր իրավիճակը փոխվել է, ամենուր աղմուկ է: Ստիպված գնում ես տուն, որ տանը հանգստանաս, բայց դուրս ես գալիս պատշգամբ և հանկարծ հիշում ես, որ շենքից հինգ մետր հեռավորության վրա կառուցվել է մեքենայի լվացման կետ և այդ պահին ուժեղ ջրի շիթով մեքենան են լվանում: Իհարկե, կան բազմաթիվ խնդիրներ աղմուկի հետ կապված: Մեղավորները և՛ մենք ենք, և՛ քաղաքային իշխանությունները: Ես հիմա կոնկրետ փաստերի մասին եմ ուզում նշել. օրինակ՝ մեր խմբակցությունն ահազանգ է ստացել երկու բնակելի շենքից /Վիլնյուսի 57/1 և Ե.Կողբացու 2Ա/ հասցեներից, որտեղ բակերում տեղադրված են մեքենաների լվացման կետեր, կարծում եմ սա անընդունելի է: Հիմա ես ինչ-որ լուծման տարբերակներ չեմ կարող առաջարկել: Կարող են լվացման կետերը տեղադրել շենքերից 20-30մ հեռավորության վրա կամ կարելի է այս հարցերով զբաղվող հանձնաժողով ստեղծել, միգուցե այս մասով հանձնարարական տրվի վարչական շրջանների ղեկավարներին: Սա փաստ է, որ մարդկանց հանգիստն իրենց բնակավայրերում աներևակայելի ձևով խախտվում է:

Պարոն քաղաքապետ, ինչ ե՞ք այս մասով մտածում և ինչպե՞ս կարելի այս հարցը լուծել:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Հարոյան: Կարծում եմ Ձեր կողմից բարձրաձայնված հարցը պետք է իրականացվի կետային լուծումներով: Երևանի քաղաքապետարանն ունի «Ակտիվ քաղաքացի» հարթակը, որտեղ դիմում են նմամանատիպ խնդիրներով և այդ տեղեկատվությունը մենք պարբերաբար փոխանցում ենք ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի մեր գործընկերներին: Ինչ վերաբերում է այս մասով համակարգային լուծումներին, կարծում եմ պետք է հավելյալ քննարկումներ իրականացնել և միգուցե քննարկել օրենսդրական որոշակի փոփոխություններ, գործունեությունն առհասարակ չարգելելով, որոշակի հավելյալ կարգավորումներ կկիրառվի հարցի վերաբերյալ:

Սամվել Հարոյան

-Կարծում եմ այս հարցն ունի համակարգային լուծման կարիք: Իմ նշած այս երկու դեպքերը թող հանդիսանան նախադեպ: Երևանում նմանատիպ այսպես կոչված փոքրիկ

բիզնեսների գործունեությունը բացառենք, որովհետև մարդիկ իրենց բնակավայրերում պետք է հանգստանան:

Տիգրան Ավինյան

-ՀՀ կառավարության մեր գործընկերների հետ և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի շրջանակներում այս հարցերը կքննարկենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Նատալյա Սինորյան, խնդրեմ:

Նատալյա Սինորյան

-Շնորհակալություն, իմ հարցը վերաբերում է Նուբարաշեն վարչական շրջանի աղբավայրի տարածքի ճանապարհին, որը գտնվում է վատ վիճակում և այդ պատճառով շատ հաճախ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի մեքենաները փչանում են: Ցանկանում էի իմանալ, թե ե՞րբ է նախատեսվում տվյալ հատվածի վերանորոգման աշխատանքները և ի՞նչ ժամկետներում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը, խնդրեմ:

Սաշա Կատվայան

-Տիկին Սինորյան, Նուբարաշեն վարչական շրջանի աղբավայրի այդ հատվածում իրականացնում ենք հարթեցման որոշակի աշխատանքներ: Քանի որ այնտեղ հողը սողանքային է, հատկապես տեղումների ժամանակ խնդրներ են լինում: Այս մասով, ներկայումս քննարկումներ ենք իրականացնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հետ: Հարցին որոշակի լուծում տալու համար այնտեղ պետք է իրականացվի հիմնային աշխատանք, որովհետև յուրաքանչյուր տեղումից հետո լուրջ խնդիրներ են լինում:

Պարոն քաղաքապետ, ներկայումս այս մասով քննարկում ենք լուծումները:

Նատալյա Սինորյան

-Կարող եք նշել ի՞նչ ժամկետներում կավարտվի աշխատանքները:

Սաշա Կատվալյան

-Ամենայն հավանականության մոտ ժամկետում, քանի որ մինչև աշուն այս հարցը պետք է լուծենք՝ պայմանավորված տեղումներով, որովհետև եթե նոր մեքենաներ ենք ձեռք բերում և ճանապարհի հարցը չլուծենք, լրջագույն խնդիր կունենանք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ Երևանի ավագանու անդամ Անուշ Գինոսյան, խնդրեմ:

Անուշ Գինոսյան

-Շնորհակալություն պարոն Ավինյան, ցանկանում են անդրադառնալ խմբակցությունների կազմից դուրս եկած ավագանիների մշտական հանձնաժողովների

կազմերից դուրս թողնելու հարցին, որն աննախադեպ է: Արդյոք Դուք ի վիճակի եք կարգավորելու այն օրենսդրական բացթողումը. այն է՝ խմբակցությունների կազմից դուրս եկած ավագանիներին ևս ներգրավել մշտական հանձնաժողովների կազմում, այլապես ստացվում է, որ սա ընդգծված խտրականություն է իմ և գործընկերներիս հանդեպ: Լիահույս եմ, որ այս իրավական հարցը կկարգավորեք:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, խնդրեմ:

Տարոն Մարգարյան

-Նշեմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքակառավարման մասին» օրենքով հանձնաժողովներում ավագանու անդամների ընդգրկումը տեղի է ունենում խմբակցության ղեկավարի առաջարկության հիման վրա: Տվյալ դեպքում տիկին Գինոսյանը ճիշտ է նշում, քանի որ խմբակցության կազմից դուրս եկած ավագանիները խմբակցություն չունեն, առկա է օրենսդրական բաց, որն օրենքի փոփոխության մոտակա նախագծով հնարավոր է լինելու կարգավորել:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ, տիկին Գինոսյան, ուզում եմ տեղեկացնել, որ ավագանու անդամը իրավունք ունի մասնակցելու Երևանի ավագանու հանձնաժողովների նիստերին:

Անուշ Գինոսյան

-Ես հասկանում եմ, որ մասնակցության իրավունք ունենք, սակայն ձայնի իրավունք չունենք, իսկ սա հստակ խտրականություն է և իրավունքների ոտնահարում:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ տիկին Գինոսյան, կփորձենք հասկանալ օրենսդրական բացը և լուծել այս հարցը:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Հարցս վերաբերում է թթվածնային բալոններ առաքող մեքենաներին, որոնց մուտքը սահմանված կարգի համաձայն քաղաքի կենտրոն արգելված է իրենց չափերի պատճառով: Սա բերում է լուրջ հետևանքներ, որովհետև առաքիչները բողոքում են, իսկ քաղաքացիները և հիվանդանոցներն խնդիր են ունենում այս մատակարարումները ժամանակին ստանալու հետ կապված: Չ?եք կարծում, որ անհրաժեշտ է ինչ-որ ժամային գրաֆիկ սահմանել ցերեկվա ժամերին, որպեսզի այդ մեքենաները կարողանան անարգել մուտք գործել քաղաքի կենտրոն: Նման ոլորտում միանգամից այսպիսի կտրուկ արգելքը պետք է բացասական հետևանքներ առաջացնի, որը պետք է նախապես ուսումնասիրվի: Կցանկանայի իմանալ, թե ի՞նչ եք մտածում այս հարցի վերաբերյալ:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Մելիքյան, իրականում արգելքը գործում է որոշակի ժամային շրջանակում, մասնավորապես, արգելքը չի գործում մի քիչ ուշ երեկոյան և վաղ առավոտյան ժամերին: Հետևապես, առաքումներն անկախ իրենց բովանդակությունից և էությունից հնարավոր է իրականացնել նույն օրվա ընթացքում: Հետևաբար, ոչ թե սահմանափակվում է որևէ տեսակի առաքում, այլ սահմանափակվում է որոշակի ժամեր, երբ փոքր կենտրոնն այդ ժամերին ծանրաբեռնված է: Այդ պատճառով մենք առաջարկում ենք կարգավորել նմանատիպ առաքումներն այլ ժամերի: Այստեղ պետք է, որ 24-ժամյա տրամաբանությունը գործի և որոշակի բեռնաթափում, կարող է կարգավորել նմանատիպ դեպքերը: Տիկին Մելիքյան, եթե հարցը կոնկրետացնեք հնարավոր է, որ մենք կդիտարկենք հնարավորությունը, եթե բացառիկ է և այլ հնարավորություն չկա: Չնայած, ես շատ խիստ կասկածում եմ, որ որևէ հնարավորություն չկա: Հիմնականաում որևէ տեսակի առաքում իրենց հարմարավետությամբ են իրականացնում, այսինքն՝ ցերեկային ժամերին պարզ է, որ բոլորին էլ հարմար է, բայց մենք պետք է այս գրաֆիկները մի քիչ էլ հարմարեցնենք քաղաքային կյանքին:

Սուսաննա Մելիքյան

-Նախ ես չեմ կարծում, թե Դուք այդքան մանրակրկիտ հաշվարկել եք, թե հիվանդանոցները, որ ժամերին են ընդունում այդ առաքումները կամ այդ ժամերին առաքման ընդունման համար աշխատակիցներ ներկա են, թե ոչ: Այստեղ նմանատիպ հարցեր կան, որ նախ պետք է ուսումնասիրվեն, նոր հստակեցվեն: Երկրորդը՝ հատկապես վերջին շրջանում առողջապահական հաստատությունների կողմից արդեն անոնս կա Հայաստանում նոր ինչ-որ վարակների տարածման մասին: Նման դեպքում այդ վարակիչ հիվանդությունները հիմնականում շնչառական խնդիրներ են առաջացնում, և մենք կհայտնվենք շատ վատ վիճակում: Այստեղ խնդիրը երկուսն է. առաջին՝ մեծ մեքենաների պատասխանատուներն այդպես արագ չեն կարող իրենց մեքենաները փոխել և երկրորդը, որ այստեղ նաև բնակիչների խնդիրն է: Կարելի է, օրինակ՝ ցերեկվա ժամը 12:00-ից 14:00-ը կամ ժամը 13:00-ից 15:00-ն ժամ սահմանել, որպեսզի ժամային ծայրահեղ բաշխում չլինի: Մարդիկ, ովքեր բնակվում են քաղաքի կենտրոնում և դիմում են նման ծառայություններին կարող են ցերեկվա ժամերին ունենալ նման խնդիր:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, ես հասակացա Ձեր հարցի էությունը. եթե չենք խոսում արտակարգ իրավիճակների մասին, ինչի մասին Դուք նշեցիք, որտեղ այլ կարգավորումներ են գործում և մոտեցումներն այլ են, այլ խոսում ենք այսպես ասած ընթացիկ սպասարկման մասին, այս դեպքում խոսվում է հիվանդանոցների մասին: Ենթադրվում է, որ հիվանդանոցներում մատակարարումները պետք է կանոնակարգված լինեն և պետք է հարմարվեն քաղաքային իշխանությունների կողմից սահմանված ժամերին: Մասնավոր

դեպքերի համար, խնդրում եմ այս հարցը քննարկել առողջապահության վարչության պետի հետ և համապատասխան արձագանք տալ:

Սուսաննա Մելիքյան

-Թույլ տվեք մի բան էլ նշեմ, սա ևս բիզնեսի ոլորտ է. Միանգամից արգելում կամ կտրուկ սահմանափակելու դեպքում, շատերը թողնում են այդ բիզնեսը: Այսինքն, կրճատվում է այն հնարավորությունները, որոնք անհրաժեշտության պահին մենք պետք է ոչ միայն կրճատենք, այլ նաև ավելացնենք:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյան, խնդրեմ:

Դավիթ Կարապետյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ տիկին Մելիքյան, ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայության բժշկական կենտրոններն ունեն սեփական թթվածնային կայանները և մատակարարում տեղի չի ունենում: Ձեր կողմից նշվածով առողջապահության ոլորտում որևէ մասնավոր ընկերություն թթվածին որևէ անհատի, առավել ևս հիվանդի չի մատակարարում:

Ինչ վերաբերում է նոր վարակների մասին անոնսին, ես դրանից տեղյակ չեմ, եթե այդ մասով տեղյակ եք, խնդրում եմ մեզ էլ փոխանցեք այդ տեղեկատվությունը:

Սուսաննա Մելիքյան

-Ուզում եմ նշել, որ բացի Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիվանդանոցներից կան նաև մասնավոր հիվանդանոցներ և կազմակերպություններ:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, խնդրում եմ, այս հարցով Ձեզ դիմած անձանց, ցանկը ներկայացնել պարոն Կարապետյանին, որպեսզի միասին քննարկեք և հասկանանք, թե ո՞րն է իրենց խնդիրը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Ես ունեմ երկու հարց. Առաջինը հարցը հետևյալի մասին է. Ահազանգեր ենք ստացել երևանցիներից, որ տրոլեյբուսները ոչ բոլոր կանգառներում են կանգնում: Տրոլեյբուսից հիմնականում օգտվում են կենսաթոշակառու տարիքի քաղաքացիները: Շիրազ փողոցից դեպի աջ՝ Մազմանյան փողոցի կանգառում h.15 երթուղին սպասարկող տրոլեյբուսի չկանգնելը հավելյալ դժվարություն է առաջացնում տարեց քաղաքացիների համար: Նշեմ, որ 1-05 հեռախոսահամարով հարցադրմանս պատասխանել եք, մեջբերում եմ. «Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տվյալ կանգառասրահը նախատեսված չէ տրոլեյբուսի համար և վերջինս մանևրելու սահմանափակ հնարավորության պատճառով ի

վիճակի չէ տեխշահագործման կանոնների պահանջներին համապատասխան մոտենալ կանգառին: Այս պատճառով տրոլեյբուսի նշված տեղում կանգառ կատարելը կստիպեր ուղևորին հատել փողոցի երթևեկելի մասը՝ վտանգելով սեփական կյանքը: Ելնելով վերոգրյալից, անվտանգության ապահովության տեսանկյունից, վարորդներն իրավասու չեն կանգառ կատարելու նշված տեղում»:

Իմ կողմից նշված հարցն ընդհանրապես պատասխանի հետ կապ չուներ:

Հիմա ցանկանում եմ իմանալ, ո՞րն է պատճառը, որ ոչ բոլոր կանգառներում է կանգնում հանրային տրանսպորտը սպասարկող երթուղիները, հատկապես, որ նշված կանգառը կահավորված է նոր և չկա որևէ արգելքի մասին հուշող ցուցանակ: Այս խնդրի վերաբերյալ ահազանգերը շատ են, պարզապես այս մի օրինակը նշեցի:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, խնդրեմ.

Վազգեն Հարությունյան

-Պարոն քաղաքապետ, նշեմ, որ խնդրի մասին տեղեկացված ենք: Ավագանու անդամին հարցի վերաբերյալ պատասխան ներկայացվել է: Խնդիրը կայանում է հետևյալում՝ տրոլեյբուսը երթևեկում է կոնտակտային ցանցով և նշված հատվածում կոնտակտային ցանցն անցնում է երկրորդ երթևեկելի գոտիով: Տրոլեյբուսը երկրորդ երթևեկելի գոտիում կանգնելու պարագայում, նստեցման և իջեցման հնարավորությունը լինելու է բացառապես առաջին երթևեկելի գոտիում, որը անվտանգության խնդիր է առաջացնելու ուղևորի համար: Հետևաբար, տվյալ կանգառը տրոլեյբուսը չի սպասարկում և տվյալ կանգառին հարակից 50մ հեռավորության վրա գոյություն ունի մեկ այլ կանգառ, որտեղ տվյալ տրոլեյբուսային երթուղին իրականացնում է սպասարկում:

Արշակ Սարգսյան

-Նախ այդ տրոլեյբուսը երթևեկում է առաջին գոտիով, երեկ ֆիքսել եմ, մեկ անգամ կանգնել է այդ կանգառում: Հանրային տրանսպորտի վարորդները պարտավոր են բոլոր կանգառներում կանգ առնել: Ուղղակի վարորդներին երևի ներքին կարգով հրահանգ է տրվել այդ կանգառներում կանգ չառնել, իսկ պատճառները ես կարծում եմ թաքցնում են: Ավելի կոնկրետ՝ խցանումներ է առաջանում Շիրազ-Մազմանյան փողոցների խաչմերուկում, այդտեղ խնդիրներ կան: Կանգառին մոտենալիս վարորդն ուղևորներին ասում է, որ այդտեղ մոտ է իջեն, որ նորից մյուս կանգառում չկանգնի: Ես այդ ամենը ֆիքսած ունեմ, հիմա պարոն Հարությունյանն այլ պատասխան է տալիս: Զրուցել ենք «Երևանի Էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի հետ՝ նա տարբեր պատասխան է տվել. եթե վարորդը կանգառում կանգ չի առնում՝ նկատողություն կանեն: Սա վարորդի մեղավորությունը չէ, հ.15 երթուղու վարորդներին համատարած ասված է, որ այդ կանգառում չկանգնեն, բայց օրինակ՝ երեկ վարորդը կանգառում կանգ է առել:

Վազգեն Հարությունյան

-Այդ կանգառում տրոլեյբուսի առաջացած խնդիրների վերաբերյալ կա նկարահանված տեսանյութ, եթե կարիք կա, կարող ենք հրապարակել: Ցանկանում եմ արձանագրել, որ հասարակական տրանսպորտը կանոնավոր փոխադրումներ է իրականացնում և ցանկացած տեղ ու պարագայում չի կարող կանգառ կատարել:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հարությունյան, երկուշաբթի օրը՝ գործակարավարգական խորհդակցության ընթացքում տեսանյութը կհրապարակեք:

Արշակ Սարգսյան

-Նշված երթուղու վարորդներն, եթե այդ կանգառում կանգ չեն առնելու, ճիշտ կլինի ինչ-որ նշան տեղադրել, որպեսզի քաղաքացիներն իրազեկված լինեն այդ մասին:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ, պարոն Սարգսյան:

Արշակ Սարգսյան

-Երկրորդ հարցս կապված է նրա հետ, որ օրեցօր շատանում են քաղաքացիների դիմում-բողոքները, առ այն կարմիր կետագծերի թանկացումից հետո, հատկապես հունվար ամսին, երբ լիարժեք չէր գործում կայանման վճարային համակարգը, անգամ վճարելու պարագայում, նրանք անհիմն տուգանվել են: Այդ մասին իմացել են ԴԱՀԿ-ի կողմից արգելանքի կիրառումից հետո, երբ քաղաքացու աշխատավարձի մի մասը գանձվել է՝ որպես կարմիր կետագծերի վարձավճար:

Հարցս հետևյալն է. քանի որ մեքենայի կայանման վճարումը, պետք է իրականացվի կայանման պահից մինչև 15ր ժամանակահատվածում, ապա դա խնդիրներ է առաջացնում քաղաքացիների համար: Չե՞ք կարծում, որ պետք է մշակվի մեխանիզմ, օրինակ՝ քաղաքացին տվյալ օրվա համար մեքենայի կայանման գումարը կարողանա վճարել մինչև ժ.00.00-ը, որպեսզի անիմաստ չտուգանվի: Միևնույն է քաղաքացին այդ նույն օրվա ընթացքում վճարումը կատարելու է:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, խնդրեմ.

Վազգեն Հարությունյան

-Նշեմ, որ վճարովի ավտոկայանատեղի կարգը սահմանված է ՀՀ օրենքով և Երևանի ավագանու համապատասխան որոշմամբ, հետևաբար, համակարգը գործում է սահմանված կարգի համաձայն: Կարգում հստակ նշված է, որ կայանումը կատարելուց հետո 15 րոպեի ընթացքում պետք է իրականացվի վճարումը:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը, խնդրեմ.

Սուրեն Գրիգորյան

-Ցանկանում եմ հայտնել, որ վճարումը պետք է նախապես կատարվի: Մինչև 15ր ժամանակահատվածը տրված է նրա համար, որ վարորդը կայանի մեքենան ու հասցնի վճարում կատարել: Այլ հարցը է, որ Դուք առաջարկում եք ինչ-որ լրացուցիչ կարգավորումներ սահմանել, որը կարելի է քննարկել: Ինչ վերաբերում է հունվար ամսվա կայանման վճարներին, տվյալ ամսին կահավորումը ամբողջությամբ չէր ավարտվել և Երևանի ավագանու 2023 թվականի դեկտեմբեր ամսվա ընդունված որոշմամբ տուգանքներ չեն կիրառվել: Ելնելով այն նկատառումներից, որ պետք է կահավորումն ավարտվեր, հետո կիրառվեր տուգանքներ, այսինքն՝ կարգի խախտում տեղի չի ունեցել:

Ձեր կողմից նշված առաջակը առանձին կարող ենք քննարկել:

Արշակ Սարգսյան

-Ես որոշակի տվյալներ կփոխանցեմ Ձեզ: Քննարկման նպատակն է, որ վճարման մինչև 15ր ժամանակահատվածը փոխվի և քաղաքացիներին թույլ տրվի վճարում կատարել մինչև ժամը 00:00-ն:

Սուրեն Գրիգորյան

-Շատ բարի, Ձեր կողմից ներկայացված առաջարկը կքննարկենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Առաջին հարցը վերաբերում է կարմիր գծերին.

Մինչև կարմիր գծերի մասին օրենքն ուժի մեջ մտնելը, քննարկվում էր մի շարք փողոցներում /Արամի, Բուզանդի փողոցներ, Հյուսիսային պողոտային հարակից փոքր փողոցներ/ կարմիր գծերի ավելացման հարցը: Մտահոգությունս այն է, որ այդ փողոցների ավտոկայանատեղիներում կան «աշխատակիցներ», ովքեր մարդկանց պատճառում են անհարմարություններ՝ չեն թողնում մարդիկ կայանեն իրենց մեքենաները, կամ կայանելու դեպքում պարտադիր պետք է վճարեն: Դեպքեր են արձանագրվել, որ չվճարելու դեպքում մեքենաները վնասել են:

Ես հետևել եմ Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցություններին, որտեղ չեն բարձրաձայնվել այս խնդիրները:

Տիգրան Ավինյան

-Տիկին Վարդանյան, այս եթե այս հարցը գործակարգավարական խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականներում առկա չէ, ապա հաջորդիվ ներկայացրեք:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներակայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

- Պարոն Ծովյան, տեղեկացնում եմ, որ այս տարի կահավորվել է Զաքիյան փողոցը և ամբողջությամբ տեսահսկվում է: Ներկայումս աշխատանքներ են տարվում Պուշկինի ու Տերյան փողոցներում և առաջիկա ամիսներին այնտեղ նույնպես տեսանելի կլինեն:

Տիգրան Ավինյան

-Միայն այս երեք փողոցն է, թե՞ կան նաև այլ ցանկեր:

Վազգեն Հարությունյան

-Ներկայումս Պուշկինի ու Տերյան փողոցներում աշխատանքներ են տարվում, իսկ Արամի և Բուզանդի փողոցներում պլանավորվել է աշխատանքները կատարել այս տարվա ընթացքում:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ծովյանի կողմից տրված գնահատականի հետ ես համաձայն եմ: Այն վայրերում, որտեղ կան ապօրինի կայանված մեքենաներ, պետք է առաջնահերթ այդ վայրերին անդրադառնալ:

Ռոբերտ Ծովյան

-Օրինակ՝ ցանկանում եմ հասկանալ Պուշկինի փողոցում և՛ աջ և՝ ձախ մայթին պետք է կարմիր գծեր լինեն: Քանի որ այդ փողոցը նեղ է, ինչպե՞ս է կարգավորվելու այդ հարցը:

Տիգրան Ավինյան

-Միայն աջ մայթին է լինելու կարմիր գիծ, ձախ մայթին կայանումն արգելվելու է:

Ռոբերտ Ծովյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Երևանյան լճին.

Անցյալ շաբաթ օրն այցելել եմ Երևանյան լճի հարակից տարածք: Անկեղծ կլինեմ՝ շատ լավ վիճակ էր, կային փոքր թերություններ, որոնք հուսով եմ կշտկվեն:

Հարցս վերաբերում է թե մյուս հատվածին /դեպի 3-րդ մաս/, ի՞նչ ծրագրեր կան և ի՞նչ ժամկետներ են սահմանված:

Ես շաբաթ օրն այցելել էի այնտեղ, ժամը 18.00-19.00 և ընդամենը 10 հոգի մարդ կար: Հավանաբար, հանրությունը տեղեկացված չէ, որ այնտեղ կարելի է զբոսնել: Ճիշտ կինի հանրությանն այդ մասին տեղեկացնել:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ծովյան, այնտեղ իրականացրել են բարեկարգման աշխատանքներ և ծառատունկ: Ուզում եմ շեշտել, որ Երևանյան լճի շրջակա միջավայրի հետ կապված աշխատանքները նոր են սկսվում: Իմ համոզմամբ Երևանյան լիճն ունի շատ մեծ պոտենցիալ:

Այս պահի դրությամբ քննարկվում է Նորագյուղ թաղամասի ամբողջական վերակառուցման նախագիծը և դրա շրջանակներում նաև անդրադառնալու ենք և՛

Երևանյան լճին, և՛ Իսակովի պողոտայի դիմացի հատվածում գտնվող անտառային հատվածին, որը մոտավորապես 250 հա տարածք է:

Կարծում եմ, որ Երևանյանի լճի հարակից տարածքում շատ հետաքրքիր միջավայր ենք ստեղծելու՝ հաշվի առնելով որոշակի ֆինանսական ներհոսք, որը Երևանի քաղաքապետարանն ակնկալում է կառուցապատման ծրագրերից:

Նորագյուղ թաղամասի նախագծերը ֆրանսիացի գործընկերների կողմից են հիմնականում ներկայացվել և որոշակի կոնցեպտուալ առաջարկներ կան նաև Երևանյան լճի վերաբերյալ, որը կարող է ավելի շուտ իրականացվել, քան Նորագյուղ թաղամասի նախագիծը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցություն անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-2023թ. նախատեսված 102.297.000 ՀՀ դրամից 991.234.000 ՀՀ դրամ տրամադրել եք ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցմանը, ի դեպ 238.506.000 ՀՀ դրամով ավելի է քան 2022 թվականին: Այսպիսով, փաստացի 2023թ. 89,9% կատարողականով իրականացվել է հեղեղատար համակարգերի կառուցման աշխատանքները, սակայն վերջին շրջանում անձրևները կաթվածահար արեցին քաղաքը, քանի որ միլլիոններ արժեցող ջրահեռացման համակարգը պատրաստ չէր կատարել իր գործը և խափանվեց, որի հետևանքով վնասվեց բազմաթիվ քաղաքացիների գույքը, մասնավորապես, ավտոմեքենաներ, որոնք ամբողջությամբ հայտնվեցին ջրի տակ: Սրանից բացի բազմաբնակարան շենքերի տանիքների անբարեկարգ լինելու պատճառով տուժել են նաև շենքերում ապրող քաղաքացիներ: Նշեմ, որ այս հարցով «Մայր Հայաստան» խմբակցությանն են դիմել Մաշտոցի հ. 7 բազմաբնակարան շենքի բնակիչները. շենքի վերջին և նախավերջին հարկերի բոլոր բնակարաններն ավիրված են, չունեն էլեկտրաէներգիա, բնակարանների պատերը բորբոսած են, այդ պայմաններում ուղղակի անհնար է ապրել: Խնդրում եմ պարզաբանել, թե ինչո՞ւ է թերակատարվել ջրահեռացման համակարգի աշխատանքի կատարողականը: Ինչո՞ւ չի գործել այդքան թանկ արժեցող համակարգը, որի հետևանքը տեսանք և ի՞նչ եք նախաձեռնելու քաղաքացիների վնասների փոխհատուցման նպատակով:Կցանկանայի անդրադառնալ նաև գործընկերոջս կողմից բարձրաձայնված՝ հասարակական տրանսպորտի վերաբերյալ հարցին և տեղեկանալ ժամկետներից, թե մեր խմբակցության կողմից ներկայացված նախագիծը, երբ կընդգրկվի օրակարգ:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, ցանկանում եմ որոշակի ճշգրտում անել. Բյուջետային ամբողջ հատկացումը վերաբերել է՝ տողն է այդպես. «ջրահեռացում», բայց դա եղել է կոյուղատար համակարգ, որը ևս ջրահեռացում է համարվում, ոչ թե հեղեղատար համակարգի համար է հատկացվել այդ գումարը, այլ կոյուղատար ցանցի վերակառուցման, վերանորոգման և նոր կոյուղատար ցանց կառուցելու համար: Դա այն հեղեղատար մակերևութային ջրերի հեռացումը չի, ինչի մասին Դուք խոսեցիք, այլ եղել է կոյուղատար ցանցի համար: Նույնը նշված է այս տարվա բյուջեում՝ ջրահեռացման տողով, կոյուղատար համակարգի համար:

Հարգե՛լի ավագանիներ, ինչ վերաբերում է հեղեղատար համակարգին, այո՛, Երևան քաղաքի մակերևութային ջրերի հեղեղատար և անձրևընդունիչ համակարգը կատարյալ չէ: Այսօր գործող 167 կմ համկարգը հանձնված է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությանը՝ վարձակալության պայմանագրով շահագործման: Պարոն Ավինյանի հանձնարարությամբ մայրաքաղաքում արդեն ավարտվել է գույքագրումը: Առաջինը՝ կան թաղամասեր, ոչ միայն փողոցներ, որոնք ի սկզբանե հեղեղատար համակարգ չեն ունեցել: Երկրորդը՝ կան վերակառուցման ենթակա համակարգեր. նոր կառուցապատումները հանգեցրել են նոր ծավալների, ինչքան քաղաքը բարեկարգվում և կառուցապատվում է, այնքան մեծանում է մակերևութային ջրերի քանակը: Նոր կառուցապատումները, ասֆալտապատումը, սալիկապատումը բերում է մակերևութային ջրերի ծավալի ավելացման, որը հանգեցնելու է նոր հեղեղատար համակարգի կառուցման անհրաժեշտության: Օրինակի համար ասեմ, որ այս պահին 4 խաչմերուկ է քանդվում Տերյան փողոցի երկարությամբ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մոտից մինչև Թումանյան փողոց՝ վերևի բնակելի համալիրի մակերևութային ջրերն անձրևընդունիչ ցանց ընդունելու համար: Պարոն Ավինյանի կողմից կա այդ հանձնարարականը, ավարտել ենք գույքագրումները, որի ծավալային և ֆինանսական գնահատականը Երևանի քաղաքապետը պետք է ներկայացնի ՀՀ կառավարություն և այլ դոնոր աղբյուրների, որպեսզի կառուցվի կամ վերակառուցվի հեղեղատար համակարգ: Վերջին սպառիչ պատասխանը՝ Ձեր հարցին. Նշեմ, որ այո՛, նորմայից բարձր էին տեղումները, անձրևընդունիչ համակարգը չէր կարող այդքան ծավալ ընդունել, որովհետև Երևան քաղաքն ունի շատ փոքր ծավալի անջատ հեղեղատար համակարգ: Հեղեղատար համակարգը կիսանջատ է, այսինքն՝ այն միացված է նաև կոյուղատար համակարգին և խոշոր մեծ ծավալի անձրևների դեպքում դա բերում է ծանրաբեռնվածության և հանգեցնում է մակերևութային ջրերի ծավալի աճ փողոցներում: Այս համակարգը լուրջ ներդրման և վերակառուցման կարիք ունի: Ճանապարհաշինության արդյունքում հիմա ունենք մեծ ծավալի նորակառույց հեղեղատար համակարգեր, որը արդեն ներկայացրել ենք ՀՀ կառավարություն, որպեսզի կառավարությունն ընդունի իբրև սեփականություն և հանձնի «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության շահագործմանը, սպասարկմանը և պահպանմանը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Արեյան, ես ուղղակի ուզում եմ շեշտել, որ տվյալ ոլորտում Երևանի քաղաքապետարանն երբևէ խոշոր ծրագրեր չի իրականացրել: Այս ծրագրերը սկսել ենք իրականացնել 2022-2023 թվականներից և հիմնականում կենտրոնացել ենք այն թաղամասերի վրա, որտեղ առհասարակ ենթակառուցվածք չկա: Օրինակ՝ քննարկեցինք Մուշական թաղամասը, որտեղ իրականացրել ենք կոյուղատար համակարգի կառուցում: Նշեմ, որ Երևանի քաղաքապետարանի միջոցներով նախորդ տարի 14 կմ ամբողջովին նոր կոյուղի է կառուցվել: Այս տարի նույնպես պատրաստվում ենք մոտավորապես նույն չափով կոյուղի կառուցել և հնարավորությունների ավելացման պարագայում ավելի շատ կկառուցենք: Ցանկանում եմ նշել, որ այստեղ ունենք համակարգային և ենթակառուցվածքների մաշվածության խնդիր, որը համակարագային խնդիր է և ինչպես պարոն Արեյանը նշեց՝ մոտավորապես 170 կմ ենթակառուցվածք ունենք, որը արդեն մաշված է: Որոշակիորեն այդ մաշվածությունից ելնելով ունենք համակարգային լուծումներ իրականացնելու խնդիր: Մենք գույքագրումն իրականացրել ենք, պետք է գործընկերների հետ հասկանանք ինչպես ենք փուլերի բաժանում և սկսում անդրադառնալ այդ հարցերին, որովհետև արդեն շատ տեղերում գործող կոյուղիները գտնվում վատ վիճակում և այս դեպքում տալիս ենք տեղային լուծումներ: Կրկնում եմ, քաղաքապետարանի պարտավորությունը որպես այդպիսին՝ լիազորությունների և պարտավորությունների շրջանակում չի, բայց փաստ է, որ կա խնդիր և ինչ-որ լուծումներ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության մեր գործընկերների հետ ենք իրականացնում և քաղաքապետարանի միջոցներով: Այս հարցին ավելի ամբողջական անդրադառնալով, պետք է նշեմ, որ ՀՀ կառավարության գործընկերների հետ քննարկել ենք պայմանագրային պայմանների վերանայումը «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ, որը հնարավորություն կտա այդ ընկերությանը վարձավճարների փոխարեն, որը տալիս է ՀՀ կառավարությանն այդ ամբողջ ենթակառուցվածքի օգտագործման համար, այդ գումարներն ուղղել ներդրումներին: Դա էականորեն կմեղմի այդ խնդիրները, որոնց մասին Դուք խոսում էիք, եթե, իհարկե ֆորսմաժորային իրավիճակի մասին չի հարցը:

Աննա Ավետիսյան

-Պարոն Արեյան այդ դեպքում բյուջեում գտնված պետք է նախադասությունն ուղղել, որպեսզի թյուրըմբռնում չստացվի,որովհետև հստակ գրված է՝ հեղեղատար «համակարգերի կառուցման...»: Այո°, նաև պետք է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությանը պարտադրել ավելի արդյունավետ աշխատել: Պարոն Արեյան, Դուք նշեցիք, որ շինարարություններն են ազդում ջրերի ավելցուկի հարցում, միգուցե շինթույլտվություններ տրամադրելուց առաջ ջրահեռացման համակարգը նորոգեք, հետո շինթույլտվություն տրամադրեք կամ պարտադրեք, որ այդ համակարգը նորոգեն, հետո կառուցապատում իրականանցնեն, որ այսպիսի խնդիրներ չլինի: Խնդրում եմ անդրադարձեք նաև շենքերի անբարեկարգ տանիքների հարցին:

Կամո Արեյան

-Վստահեցնում եմ Ձեզ, որ տեխնիկական պայմաններ ստանալիս, եթե կա նոր հեղեղատար համակարգի կառուցման անհրաժեշտություն, ապա ճարտարապետահատակագծային առաջադրանքում պարտադիր նշվում է դա: Ինչպես արդեն օրինակը նշեցի «Ռենշին» շինարարական-ներդրումային ընկերության կողմից կառուցապատվող բնակելի համալիրի համար հիմա կառուցվում է նոր հեղեղատար համակարգ: «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությանը Երևանի քաղաքապետարանը մասնագիտորեն հիմնավորեց, որ Կորյուն, Թումանյան, Մոսկովյան, Իսահակյան փողոցների և Սայաթ-Նովայի պողոտայի հեղեղատարը չի բավարարի նոր ծավալին և այդ պատճառով հիմա շինարարը կառուցում է նոր հեղեղատար: Ես նշեցի, որ մակերևութային ջրերի ծավալն է մեծանում, բայց միաժամանակ 3 առաջադրանքն էլ տրվում է կամ նորի կառուցում, կամ եղածի վերակառուցում. եղածը կարող է լինել թողունակությամբ փոքր, հաշվելով ջրի ծավալները «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությանը տրվում է նոր տրամաչափի խողովակի տեղադրման առաջադրանք և դա ներառվում է նախագծով շինարարության մեջ:

Աննա Ավետիսյան

-Պարոն Արեյան այդ մոտեցումը նո՞ր է:

Կամո Արեյան

-Ոչ այդ մոտեցումը կա և ներկայումս դա գործում է: Երևանի քաղաքապետի կողմից որևէ ավարտական ակտ չի ստորագրվում մինչև այս պայմանները կատարված չլինեն: Շահագործման փաստագրում չի իրականցվում մինչև թվարկածս պայմանները չլինեն:

Աննա Ավետիսյան

-Դուք քայլերը ձեռնարկում եք, բայց արդյունքն այլ է, ամբողջ քաղաքը ջրի մեջ է, համակարգը չի գործում, եթե Դուք պարտադրում եք, որ կառուցելուց առաջ այդ հարցերը լուծվեն ինչո՞ւ է այս վիճակը:

Տիգրան Ավինյան

-Տիկին Ավետիսյան, մի անդրադարձ էլ անեմ և ավարտենք թեման: Նախկինում շատ կառուցապատողներ ավարտական ակտերի համար չէին դիմում, քանի որ դրա բացակայությունը որևէ հետևանք չէր ունենում: Հիմա բացի նրանից, որ ավարտական ակտի համար չդիմելը բերում է էական տուգանքների, և շինթույլտվության ժամկետների երկարաձգման համար էական գումարներ պետք է վճարեն Երևանի քաղաքապետարան: Դրանից բացի, կա ևս մեկ նոր փուլ, որը կոչվում է շահագործման թույլտվություն: Այս դեպքում այդտեղ որոշակի մեխանիզմ է գործում, որը պարտադրում է բոլոր կառուցապատողներին ապահովվել այն բոլոր պայմաններն, ինչը պարոն Արեյանը բարձրաձայնեց, դրանից հետո նոր դիմել ավարտական ակտ ստանալու համար կամ էական տուգանքների շրջափուլի մեջ հայտնվել:

Աննա Ավետիսյան

-Ներեցեք Դուք չանդրադարձաք չբարեկարգված տանիքների ու քաղաքացիների փոխհատուցման հարցերին:

Տիգրան Ավինյան

-Տիկին Ավետիսյան, նախ եկեք հասկանանք, որտեղ են սկսվում և ավարտվում Երևանի քաղաքապետարանի լիազորությունները, որովհետև դրանք շատ հստակ են: Այս դեպքում, երբ խոսքը գնում է բազմաբնակարան շենքերի մասին, Երևանի քաղաքապետարանը կրկին միջոցների ավելցուկից ելնելով, իրականացնում է աշխատանքներ նաև նմանատիպ ծայրահեղ դեպքերում: Մասնավորապես, սուբսիդավորվում են համատիրությունները: Ասեմ ավելին, նաև շենքերի վերելակների մասով հարցը քաղաքապետարանի պարտավորությունների մեջ չի մտնում: Այս շենքերին հետևելը մտնում է համատիրության բազմաբնակարան շենքերի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների մեջ: Կարելի է ասել, որ բոլոր վարչական շրջաններում այդ աշխատանքներն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի կողմից հնարավորություն ունենալու դեպքում: Օրինակ՝ Էրեբունի վարչական շրջանում չնորոգված հարթ տանիք չկա: Այս մասով իրականացվող ծրագրերը քաղաքապետարանի կողմից բարի կամքի դրսևորում է, որովհետև քաղաքապետարանն այս մասով պարտավորություն չունի: Նշեմ, որ Խորհրդային միության փլուզման հետևանքով շատ հարցեր չլուծված են և հասկանալով իրավիճակը, ծրագրեր ենք իրականացնում վերելակների ու տանիքների մասով: Պետք է նաև բնակիչներին փոխհատուցում տա՞նք, երբ իրենք իրենց սեփական գույքին չեն հետևում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Առաջին հարցը վերաբերում է ս.թ. մայիսի 22-ին Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության վարորդների կողմից գործադուլին.

«Մայր Հայաստան» խմբակցության անդամներն ս.թ. մայիսի 22-ին այցելել են «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերություն, զրուցել են վարորդների հետ և ծանոթացել են տնօրինության հետ: Հանդիպմանը ներկա է եղել քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետը և ներկայացրել է, որ գլխավոր ճարտարագետի կողմից եղել են թերացումներ ու վատնումներ: Այդ պահին ընկերությում ընթանում էր աուդիտ:

Աուդիտն ավարտվել է ինչու՞ քաղաքացիներին վատնումների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել: Գործընթացն ի՞նչ փուլում է և արդյոք իրավապահները զբաղվում են այդ հարցով:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Քոչարյան, տեղեկատվությունը կներկայացվի սահմանված ժամկետներում, վստահաբար, այդ ժամկետները կպահպանվեն:

«Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերությունում տեղի ունեցած գործադուլից հետո աշխատակազմում տեղի են ունեցել փոփոխություններ և բարձրաձայնված բոլոր խնդիրների լուծումը գտնվում է նոր համակարգի ներդրման մեջ: Այս ընկերությունում և նմանատիպ այլ կառույցներում տասնամյակներ շարունակ չարաշահումներ լինելու վերաբերյալ ռիսկերը նոր համակարգի դեպքում բացառվում է:

Ընկերությունում անցկացված աուդիտի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արթուր Վարդանյանը:

Արթուր Վարդանյան

-Տեղեկացնում եմ, որ ներքին աուդիտի օրենսդրության համաձայն՝ աուդիտորական առաջադրանքի հաշվետվությունը հրապարակման ենթակա չի, այն հասանելի է միայն Երևանի քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին: Այս պահին աշխատանքներն ավարտվել են, հաշվետվությունը կազմման փուլում է, առաջիկայում կներկայացվի Երևանի քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին:

Արմեն Քոչարյան

-Հարցը վերաբերում էր վատնումներին, հետաքրքիր է քաղաքացիները չպե՞տք է արդյոք իմանան վատնումներ եղել են, թե՞ ոչ: Լրագրողների ներկայությամբ հայտարարվել էր, որ կան վատնումներ և թերացումներ, որի պատճառով էլ գլխավոր ճարտարագետին ազատում են աշխատանքից:

Տիգրան Ավինյան

-Պարոն Քոչարյան, ես նշեցի, որ «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության աշխատակազմում տեղի են ունեցել էական փոփոխություններ, որի մասին և՛ վարորդները և՛ հանրությունը տեղեկացվել է: Փաստ է՝ ընկերությունում որոշակի խնդիրների առկայությունը և դրանց լուծման ուղղությամբ անդադար և կոնկրետ քայլերի իրականացումը:

Ինչ-որ փուլում իրավապահ մարմինների ներգրավվածության անհրաժեշտության դեպքում, նրանք անպայման կներգրավվեն այդ գործընթացին:

Արմեն Քոչարյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Կուրղինյան փողոցի հ.2/1ա հասցեում գտնվող բնակելի տանը, որը պատկանում է տնտեսագիտական գիտությունների թեկնածու Վալյա Սարգսյանին:

1992 թվականին Վահան Զատիկյանի կողմից Վալյա Սարգսյանին տրվել է մշակելու համար հողատարածք, որը 2005 թվականին սեփականաշնորհվել է: 2011 թվականին կառուցվել է շինության 2-րդ հարկը և Վալյա Սարգսյանը 16.05.2011թ.-ին ստացել է 2-րդ

վկայականը (հ. 2772686): Վալյա Սարգսյանին պատկանող հողամասերին շրջապատող հողամասերն այն ժամանակ հանդիսացել են համայնքային հողամասեր: Այս պահի դրությամբ Վալյա Սարգսյանը չի կարողանում մուտք գործել իր բնակարան: Բնակարան մուտք գործելու համար փայտե աստիճանը դնում է հարևանի տան պատին և մուտք է գործում իր բնակարան: Վալյա Սարգսյանի բնակարան տանող բոլոր ճանապարհները փակված են: Դատական գործընթացներ է եղել և ինչ-որ ճանապարհ է բացվել: Մենք այցելել ենք և տեսել ենք, որ դարպասն առկա է, սակայն խոչընդոտվում է Վալյա Սարգսյանի մուտքը բնակարան: Հետնամասում հարակից հողամասն աճուրդով վաճառվել է և կառուցվել է գործարան:

Արմեն Կարապետյանն 2018 թվականին ունեցել է 310 քմ հողատարածք, որն հետագայում ավելացվել է այդ ճանապարհի հաշվին:

Խնդրում եմ պատասխանել թե ինչպե՞ս կարելի է լուծել Վալյա Սարգսյանի խնդիրը: 2017 թվականից այս հարցը քննարկվում է: Երկու անգամ՝ մարտ և ապրիլ ամիսներին այս հարցի վերաբերյալ դիմում է ներկայացվել պարոն Արեյանին, որին չի պատասխանվել:

Պարոն Ավինյան, Դուք եղել եք ավագանու ընդիմադիր անդամ և այս հարցի շրջանակներում Վալյա Սարգսյանը գտնվել է այս դահլիճում և մինչ այսօր հարցը չի լուծվել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանը:

Ռոմիկ Մխիթարյան

-Բարձրացված հարցի կապակցությամբ դիմել են նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, հարցն ուսումնասիրվում է և ճանապարհ բացելու համար խնդիր կա:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մխիթարյան, իրականում եթե որևէ հողամասի մոտ առկա է «կղզիացած տրամաբանություն», ապա այդտեղ օրենքը հստակ գործում է, թե ով պետք է ճանապարհ տա: Բարձրացված հարցը քննարկեք քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման ու ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների հետ, որպեսզի հասկանանք լուծումները:

Արմեն Քոչարյան

-Այդտեղ «կղզիացած» վիճակ չէ, կա ճանապարհ, բայց առկա է նաև խոչընդոտ:

Հարցը կայանում է նրանում, որ այդտեղ կա 3 բնակարան և բնակիչները չեն կարողանում մուտք գործել իրենց բնակարաններ: Վալյա Սարգսյանը նույնիսկ ներկայումս առկա ճանապարհով բնակարան մուտք գործել չի կարող, քանի որ այդտեղ թափված է շինարարական աղբ և առկա են հողի թմբեր:

Տիգրան Ավինյան

-Պարոն Քոչարյան, նույնիսկ եթե այդ հողատարածքները սեփականաշնորհված են, միևնույնն է օրենքը հստակ կարգավորում է պարտավորությունները:

Արմեն Քոչարյան

-Վալյա Սարգսյանն արդեն ութ տարի է ապրում է վարձով և այս հարցն ունի հրատապ լուծման կարիք: Ես պատրաստակամ եմ այցելել այդ հասցե և տեղում ծանոթանալ խնդիրներին և հարցին հրատապ լուծում տանք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Խաչատրյան, եթե հարցի վերաբերյալ տեղեկատվություն ունեք, խնդրում եմ ներկայացնել պարզաբանում:

Վահան Խաչատրյան

- Ոչ տեղյակ չեմ, կուսումնասիրեմ և լուծումը կտրվի:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցություն անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

-Առաջինը՝ կցանկանայի անդրադառնալ գործընկերներիս հարցին, որի պատասխանը ճիշտն ասած չստացանք, հետո կանցնեմ իմ հարցին: Խնդրում եմ բացատրել, թե որոնք է պատճառները, երբ ընդիմադիր խմբակցության կողմից նեկայացված նախագիծը, որը մուտքագրվում է քաղաքապետարան և օրակարգ չի ընդգրկվում: Ինչպե՞ս է տարբերակվում, թե ե՞րբ է հրատապ համարվում հարցը: Տրանսպորտի վարձավճարի թանկացման դեմ մեր խմբակցության կողմից ներկայացված նախագիծը Երևանի ավագանու օրակարգ չի ընդգրկվել: Միևնույն է մեծամասնություն եք կազմում, նախագիծը կարող եք օրակարգ ընդգրկել և դեմ քվեարկել, բայց գոնե քաղաքացիներն այդ նախագծի մասին կտեղեկանան:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ պարոն Հակոբյան, եթե բարձրաձվայած հարցը վերաբերում է Ձեր խմբակցության ավագանու անդամի կողմից ներկայացված տրանսպորտի առաջարկին, ապա այն, իր տեսակով չի համընկնում այն ռեֆորմների հետ, որը Երևանի քաղաքապետարանի գործադիր մարմինն առաջարկում է: Այստեղ հրատապության հարցի քննարկումն ուղղակի բացակայում է, որովհետև այդ առաջարկը 180 աստիճան տարբերվում է այն ընդհանուր ռեֆորմների տրամաբանությունից, որ Երևանի քաղաքապետարանն իրականացնում է տրանսպորտի ոլորտում: Հետևապես, հրատապություն այդ հարցի քննարկման հետ կապված չկա: Մասնավորապես, այդ հարցի շուրջ, Երևանի ավագանու 2 նիստի ընթացքում, յուրաքանչյուր նիստին մի քանի ժամ քննարկում է եղել: Ձեր խմբակցությունն իր տեսակետները ներկայացրել է, այդ տեսակետների պատասխանները ներկայացվել են, մանրամասն քննարկվել է այն

նախագիծը, որը ընդունվել է:

Հիմա փաստն այն է, որ Դուք առաջարկում եք քննարկել հարց, որը 180 աստիճան տարբերվում է ռեֆորմի տեսանկյունից, չունի հրատապություն և արդեն 2 անգամ քննարկվել է:

Սամվել Հակոբյան

-Ես նշեցի հանրային տրանսպորտի վերաբերյալ մեր խմբակցության կողմից ներկայացված նախագծի մասին, բայց միայն այդ նախագիծը չի, որ օրակարգ չի ընդգրկվել: Առհասարակ, ցանկանում ենք իմանալ ի՞նչ համակարգով է, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ներկայացված նախագծերն ավագանու օրակարգ ընդգրկվում, իսկ «Մայր Հայաստան» խմբակցության կողմից ներկայացվածները՝ չեն ընդգրկվում: Անգամ, եթե ընդգրկվի փաստացի Ձեզ վնաս չի լինելու. նախագիծը քննարկվելու է, լուսաբանվելու է և դեմ եք քվեարկելու:

Հիմա անցնեմ հարցիս, այն քաղաքական է, նույնիսկ աշխարհաքաղաքական և անվտանգային. Երևանի ավագանու նիստի ընթացքում այս հարցը չէր հնչի, եթե այս թեմայի մեջ ներգրավված չլիներ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը:

Վերջերս նա այցելել է Ուկրանիայի Բուչա քաղաք, արել է հայտարարություններ, որոնք վնասում են մեր երկրի անվտանգային համակարգը և հայ-ռուսական հարաբերությունները: Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարն Երևանի իշխանության կոալիցիոն ուժերից մեկի ներկայացուցիչն է, նրա հայտարարությունները ներքաշում են Հայաստանը Ռուսաստան-Արևմուտք կոնֆլիկտի մեջ՝ մեր երկիրը դարձնելով հակառուսական կողմ: Ես կցանկանայի իմանալ, թե արդյոք Բուչա այցը և արված հայտարարությունները դրակա՞ն է գնահատվում Տիգրան Ավինյանի կողմից և արդյոք համաձայնեցված է եղել Տիգրան Ավինյանի հետ: Ավինյանն տեղյա՞կ է եղել այդ այցից, եթե ոչ, ապա ի՞նչ կարծիք ունի այդ ամենի մասին, եթե այո, ապա ինչպես է, որ Ուկրաինան, որն ամեն կերպ պաշտպանում է Ադրբեջանին, ողջունում ադրբեջանական ագրեսիան՝ ընդդեմ Արցախի, ֆոսֆորային զենք է մատակարարում Ադրբեջանին, որի միջոցով հայ զինվորներ են մահանում, իսկ Հայաստանի իշխանությունը հակաուկրանիական «կողմն է բռնում» և նույնիսկ օգնություն հասցնում մեր երկրի դեմ թշնամաբար տրամադրված Ուկրանիային:

Նշեմ, որ Բուչայի մասին կա մի կեղծ քարոզչություն, որի մեջ մեր երկիրը մեխանիկորեն դառնում է մաս: Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը ներկա է լինում այնտեղ չէ՞ որ Հայաստանի իշխանությունը, գոնե ֆորմալ առումով ընտրել է նետրալ դիրք Ուկրանիական –Ռուսական կոնֆլիկտի մեջ:

Այս հարցի մասով ցանկանում էի իմանալ Ձեր կարծիքը՝ Ձեր ենթակա աշխատողի արարքի մասին:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ պարոն Հակոբյան, ինչպես նշեցիք Երևանի քաղաքապետարանի ներկայիս գործադիր մարմինը բաղկացած է կոալիցիոն համագործակցության շրջանակներում կառավարվող ընդհանուր երկու ուժից: Մասնավորապես, կան վարչական շրջանների ղեկավարներ, ովքեր «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների ավագանու անդամներ են և կան անկուսակցական վարչական շրջանների ղեկավարներ: Առհասարակ, պարոն Հակոբյան, ես բոլոր վարչական շրջանների ղեկավարների՝ որպես քաղաքապետի ներկայացուցիչներ, մասնավորապես, տվյալ վարչական շրջանի ղեկավարի տեղաշարժից տեղյակ եմ: Այդ առումով, եթե Ձեզ հետաքրքրում է, այս հարցի վերաբերյալ իմ կարծիքը, ես վստահաբար պատասխանում է, որ այո՛ տեղեկացված եմ և եթե Ձեզ այլ մանրամասներ ու աշխարհաքաղաքական ենթատեքստեր են հետաքրքրում, ապա ինձ թվում է այս հարցը մեր քաղաքային իշխանությունների և Երևանի ավագանու նիստերի դահլիճի քննարկման շրջանակներից դուրս են:

Սամվել Հակոբյան

-Ես զուտ ուզում էի լսել հարց-պատասխան. ցանկանում էի, որ հասկանալ, թե Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարն իբրև իր կուսակցության ներկայացուցիչ է գնացել Ուկրանիա, թե՞ որպես Երևանի քաղաքային իշխանություն, ներկայացնելով գնացել է այդ քայլին: Սա իմ կարծիքով առնվազն աննախադեպ և աբսուրդային է, երբ Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարն զբաղեցնելով այդ պաշտոնը, գնում է Ուկրաինա: Այսինքն, այդ արարքով նա ցույց է տվել ոչ միայն իր, այլ նաև Երևանի քաղաքային իշխանությունների վերաբերմունքն ու կողմնորոշվածությունը: Ես այդպես հասկացա Ձեր պատասխանից:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Պարոն քաղաքապետ, ունեմ երկու հարց, որոնք վերաբերում են շինարարության և բարեկարգման ոլորտին:

-Ցանկանում եմ իմանալ, հնարավո՞ր է որևէ փողոց ոչ ամբողջությամբ ընդգրկված լինի միջին նորոգման աշխատանքների ցանկում, մասնավորապես՝ խոսքը վերաբերում է Թոթովենցի փողոցին:

Երևանի քաղաքապետարանի 24.06.2024թ. գործակարգավարական խորհրդակցության ընթացքում լսեցի, որ աշխատանքներն ավարտվել են, բացառությամբ՝ Նանսենի փողոցի:

Թոթովենցի փողոցում ես երթևեկել եմ, անցյալ շաբաթ փողոցում կար տեխնիկա, այս շաբաթ տեխնիկա այլևս չկար:

Թոթովենցի փողոցը 800 մետր է, որից՝ 500 մետր հատվածը նորոգված չէ, 300 մետր հատվածը վերանորոգված է: Մոլդովական-Թոթովենցի փողոցների խաչմերուկից մինչև Վերածննդի այգի ընկած հատվածն ընդհանրապես վերանորոգված չէ:

Աշխատանքներն եթե չեն ընդունվել, ապա հետամուտ եղեք տվյալ խնդրին:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

Արմեն Հարությունյան

-Այս տարվա միջին նորոգման ծրագրում նախատեսված է վերանորոգել Թոթովենցի փողոցի մեկ հատվածը, այսինքն Թոթովենցի փողոցի խաչմերուկից մինչև Թոթովենց-Ստեփանյան փողոցների խաչմերուկ ընկած մոտ 350մ հատվածն է մասնակի վերանորոգվել:

Տիգրան Ավինյան

-Տիկին Քերոբյան, ընտրվել են փողոցները, որոնց միջին նորոգման ծրագրի արդյունավետությունը կլինի ամենալավը: Թոթովենցի փողոցի մյուս հատվածի վերանորոգման աշխատանքներն կիրականացվի հաջորդիվ՝ մյուս տարիներին:

Դիանա Քերոբյան

-Ինձ շատ են դիմում քաղաքացիները, Մաշտոցի պողոտայում գտնվող Փակ շուկայի հարակից տարածքում գետնանցումի հիմնանորոգման աշխատանքների վերաբերյալ:

Աշխատանքներն ի՞նչ փուլում է և ե՞րբ կավարտվեն:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

Արմեն Հարությունյան

-Մաշտոցի պողոտայում 2-րդ փուլով սկսված աշխատանքները պայմանավորված են ջրի հոսքի տեղափոխման գործընթացով: Աստիճանավանդակների դիմաց՝ դեպի ներքև իջնող հատվածում տեղադրվել են ջրահեռացման բակեր, կատարվել են վերին շերտի իզոլացիոն աշխատանքներ, որից հետո տեղի կունենան սալիկապատման աշխատանքներ: Հիմնականում աշխատանքները ձգձգվել են այլ պատճառներով, այս պահին տեղի են ունենում սալիկապատման աշխատանքներ:

Տիկին Քերոբյան, կարծում եմ մինչև շաբաթվա վերջ այդ աշխատանքները կավարտեն:

Տիգրան Ավինյան

-Տիկին Քերոբյան, ես ուզում եմ շեշտել՝ այն դեպքերից է, որ ինչ-որ աշխատանք կատարելուց ի հայտ են եկել տասնամյակներով չլուծված ենթակառուցվածքային

խնդիրներ: Այսինքն, ինչ-որ մի հատված բարեկարգվում է, հետո սկսվում է գետնանցումի հետ ոչ ուղղակիորեն կապված՝ հարակից կոյուղու, ջրատար համակարգի և այլ ենթակառուցվածքների խնդիրների ի հայտ գալը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցություն անդամ Արմեն Մկրտչյան, խնդրեմ:

Արմեն Մկրտչյան

-Շնորհակալություն, հարցս հետևյալն է. Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոցից դեպի Աբովյան փողոցի խաչմերուկի հատվածում կա մի կիսաքանդ և պարիսպապատված շենք: Վերջինիս պարսպի բարձրությունն այնքան ցածր է, որի ներսից երևում է շինարարական տեխնիկան և կիսաքանդ շենքը: Այնտեղ կան նաև փակցված ինչ-որ գովազդային թերթիկներ ու ընդհանուր տեսարանը շատ տգեղ է: Այս մասով ինձ հետաքրքրում է Երևանի քաղաքապետարանն ունի լծակներ ազդելու կառուցապատողի վրա, որպեսզի պարիսպի բարձրությունը փոխվի, քանի որ համաձայն օրենքի՝ կառուցապատողը կարող է մինչև 8մ բարձրությամբ պարիսպ կառուցել:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ պարոն Մկրտչյան, եթե հարցը վերաբերում է սեփականատիրոջ հողատարածքում կատարված որևէ աշխատանքին՝ ապա համաձայն «Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր նախագծի՝ առաջարկում ենք ընդունել այսպես կոչված «քանդման պահանջ» կամ «նախկին տեսքը վերականգնել» հասկացությունները, որոնք պետք է իրականացվեն սեփականտիրոջ կողմից՝ ապօրինի կամ ինքնակամ շինությունների, կամ նախագծով չնախատեսված որևէ կառույցների քանդման կամ տարածքի վերականգնման մասով: Այսինքն, մենք, նմանատիպ լծակ ենք նախատեսել «Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքի նախածով, որ հնարավորություն կտա Երևանի քաղաքապետարանին մասնավոր տարածքում ունենալ նմանատիպ լիազորություն:

Տիգրան Ավինյան

- Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

-Պարոն Ավինյան, Դուք ասում եք, որ վերանորոգվում է կարևոր հանգույց, այնուհետև բացվում են նոր շերտեր: Այդ պատճառով անհրաժեշտ է աշխատանքները նախապես կանխատեսել: Աշխատանքներն կոնցեպտուալ այդպես պետք է կատարել: Մինչ այսօր այդ շինարարության շուրջ անվտանգության գոտի չկա: Ես այսօր այդ հատվածում շրջանցել եմ փողոցով:

Դավիթ Բեկի փողոցում շուրջ մեկ ամիս է փոս կա: Կարծում եմ, որ կարելի է մասնավոր ընկերության հետ համագործակցության շրջանակներում ստեղծել բյուջետավորված արագ արձագանքման միավոր, որոնք ինչ-որ բյուջեի չափով կիրականացնեն այդ փոսերի վերանորոգման աշխատանքները, մինչև մնացած գործընթացները կիրականացվեն: Այս հարցը նաև անվտանգային խնդիր է իրենից ներկայացնում, քանի որ կտրուկ արգելակման հետևանքով բավականին հաճախակի տեղի են ունենում ավտովթարներ:

Խնդրում եմ հետագայում առավել մանրամասն ներկայացնել ի՞նչ նախագծեր են քննարկվում Նորագյուղ թաղամասի և Կասկադ համալիր հետ կապված:

Այժմ անդրադառնամ հարցիս.

Պարոն Ավինյան, Երևանի ավագանու օրակարգում քննարկվում են կետային և մասնավոր հարցեր, որը շատ լավ է: Սակայն, Երևանի ավագանին ներգրավված չէ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներում: Այդ աշխատանքներում ներգրավված լինելով Երևանի ավագանու անդամները կարող են հարցեր բարձրացնել և ներկայացնել առաջարկներ: Օրինակ՝ այսօր քննարկվեց աղմուկի վերաբերյալ հարցը, որը կետային հարց էր: Աղմուկի վերաբերյալ հարցերի լուծման համար՝ որպես ամենաշատ աղմուկ գեներացնող համայնքի ներկայացուցիչներ, պետք է հետևողական լինենք, որպեսզի ՀՀ ԱԺ մաքսիմալ արագությամբ ու էֆեկտիվությամբ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի շրջանակներում կամ առանձին կարգավորումներով լուծի այդ հարցը:

Ուրախ եմ, որ Երևանում բացվում են նոր ինֆրակառուցվածքներ, օրինակ՝ Դվին հյուրանոցի հարակից բարձրահարկ շենքի տանիքին ստեղծվել է հանգստյան գոտի, որտեղ կա լողավազան: Սակայն, այդ հանգստյան գոտին աշխատում է մինչև գիշերվա ժամը 02.00-ն և համոզված եմ, որ դա խոչընդոտում է հարակից բնակավայրերի բնակիչների անդորրը: Ուստի՝ անհրաժեշտ է Երևանի ավագանու ռեսուրսն օգտագործել ավելի լուրջ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի շրջանակներում համայնքը պետք է ունենա նման օբյեկտների գործունեության նկատմամբ առավել խիստ հսկողություն իրականացնելու կամ դրանց գործունեությունը դադարեցնելու լիազորություններ: Երկու տարի առաջ որոշվել էր գիշերային ակումբների աշխատանքը կազմակերպել Երևան քաղաքի վարչական սահմաններից դուրս, սակայն առայսօր այդ ակումբներն աշխատում են Երևանում:

Արդյոք մտածում ե՞ք, որ նման կարևոր և կոնցեպտուալ հարցերի շուրջ ավագանու ներկացուցիչների հետ պետք է ավելի սերտ աշխատել:

Տիգրան Ավինյան

-Ես և գործադիր մարմնում այս գործընթացին ներգրավված յուրաքանչյուր անդամ մեծ ուրախությամբ կընդունենք որևէ առաջարկ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր նախագծում աղմուկին վերաբերող կարգավորումներ չենք նախատեսել:

Ուրախ կլինեմ քննարկել, և այս հարցին տալ բովանդակային և իրավական լուծումներ:

Յուրաքանչյուր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ ունի հրատապ խնդիրների համար նախատեսված որոշակի բյուջե:

Դավիթ Բեկի փողոցում տեղի է ունեցել փլուզում, և՛ վարչական շրջանի, և՛ Երևանի քաղաքապետարանի բյուջեով նման դեպքերի լուծման համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն: Ուստի՝ այլ ընթացակարգով, բայց հրատապ կարգով հատկացրել ենք 150 000 000 ՀՀ դրամ: Այդ ենթակառուցվածքի նորոգումն ենթադրում է որոշակի գործընթաց:

Պարոն Արեյանը կնկարագրի ինչ խնդիր է եղել:

Կամո Արեյան

-Ավագանու հարգելի՛ գործընկերներ, պատկերացում չստեղծվի, որ դա փոս է և մեկ ամիս այն չի վերականգնվել: Ողջաբերդ գետը մտնում է Երևան քաղաք 13 կմ երկարությամբ, որին միանում է Ջրվեժը: Այս երկու գետերը կամրջային, թունելային կառուցվածքով միանում են իրար գերեզմաններ տանող՝ ծաղկավաճառների խանութի մոտ: Դուրս են գալիս և հատում են Դավիթ Բեկի փողոցը, որից հետո Ռոստովյան փողոցով հասնում են «Կինո Հայրենիք» շենքի հարակից խաչմերուկ և շենքի բակում միանում են Գետառ գետին: Այս երեք գետերը հասնում են Հրազդան գետ: Փլուզումը վերաբերում է թունելային կառուցվածքին: Ողջաբերդ գետն երեք տեղում հատում է փողոցներ՝ Նուբարաշեն, Նոր Արեշի 50-րդ փողոցները և երկու գետերը միասին հատում են Դավիթ Բեկի փողոցը: Ընդհանուր մոտ 200 մետր թունելային ծածկով ենթակառուցվածք է, որի միջով հոսում է գետը: Խորությունը որոշ հատվածներում 9 մետր է, որոշ հատվածներում՝ 6.5-7 մետր: Փլուզված հատվածի երկարությունը 82 մետր է: Այդ թունելի երկարությունը, որը հատում է Դավիթ Բեկի փողոցը և ծառայում է որպես երթևեկ, գտնվում է ասֆալտբետոնյա ծածկի տակ: Այն պանելային, հենապատային կառուցվածք է: Երկու պանել պոկվել են ծայրամասից և ստեղծվել է տպավորություն, որ փոս է առաջացել: Փոս չի առաջացել, այլ շատ վթարավտանգ երևույթ է ստեղծվել:

Պարոն քաղաքապետի հանձնարարությամբ երեք մասնագիտացված կառույց է իջեցվել թունել: Հանրապետության լավագույն մասնագետները և Երևանում գործող լավագույն կամրջաշինարարները տվել են նույն եզրակացությունը, որ 82 մետր լայնությամբ թունելային այս հատվածը վթարավտանգ է: Վնասված են բոլոր հեծան պանելները և քայքայված է հենապատը: Եզրակացություններից մեկը տրվել է գրավոր, մյուս երկուսը՝ բանավոր: Զեկուցել եմ քաղաքապետին, որ միանշանակ պետք է իրականացնել կապիտալ վերակառուցում:

Պարոն Թորոսյան, այս հատվածում մասնակի նորոգում իրականացնելու անհրաժեշտություն չկա: Այս դեպքը գլոբալ ուսումնասիրվել է և կա մեկ եզրակացություն՝ ամենավթարային հատվածը համարվում է իջնող թևը, այն այժմ արգելափակված է: Պետք է փոխել 82 պանել, իսկ ամբողջ հենապատը քայքայված է, որի միջով հոսում է երկու գետ: Հետևապես, պետք էր կազմել արագ արձագանքման ծրագիր, որը նույն օրը արվել է պարոն Ավինյանի հանձնարարությամբ: Այս աշխատանքը պետք էր հիմնավորել որպես վթարավտանգ երևույթ և մեկ անձից գնման ճանապարհով պետք է իրականացվի անհետաձգելի ֆինանսավորում: Ֆինանսավորման հարցը լուծվել է և այժմ կազմվում է հենապատի ամրացման նախագծային լուծումները և իրականացվում է հեծանները նորով փոխարինման աշխատանքները: Ինչը նախկինում արվել է ավազի և ցեմենտի սվաղի միջոցով, այժմ անթույլատրելի է, քանի որ այդ դեպքում տարիներ անց կլինի նույն վթարը:

Պարոն Ավինյանի կողմից խնդիր է դրվել, որ հարցը լուծել կապիտալ, որպեսզի տասնամյակներ շարունակ այդ կառույցն անվտանգ շահագործվի: Այդ պատճառով փոխվում են նաև հենապատերը: Այժմ նոր տեխնոլոգիայով արտադրված հավաքովի բազմոցի նման հենապատեր կիրառելով լուծվում է նաև հատակի հարցը: Մասնագիտացված կառույցին պատվիրել ենք հենապատերի արտադրությունը, մեկ օրվա ընթացքում հնարավոր է արտադրել 4 հատ: Մոտակա օրերին կավարտենք փաստաթղթային հարցերի կարգավորումը, ճանապարհը կփակենք բարձր արգելապատերով՝ տեսանելի և լուսային անդրադարձիչներով: Առաջին փուլը կտևի մոտ 40-50 օր:

Նախորդ գործակարգավարական խորհրդակցության ընթացքում պարոն Ավինյանի կողմից տրվել է հանձնարարական.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հետ համատեղ մշակել տեխնիկական առաջադրանք՝ պատվիրելու սեյսմիկ ուսումնասիրություն Երևան քաղաքի բոլոր կամուրջների, ստորգետնյա և վերգետնյա անցումների, ուղետարների և ուղեանցերի, ջրատար համակարգերի (Երևանում անցնում է մոտ 31 կմ մայր ջրանցքներ՝ դեպի Արարատյան դաշտավայր) համար:

Այդ ջրանցքների վրա կան հարյուրավոր կամրջային կառուցվածքներ: Տասնամյակներ շարունակ այդ կառույցների համար չի արվել սեյսմիկ հետազոտություն: 1960-ական թվականներին կառուցված բոլոր այս կառույցներն ենթակա են սեյսմիկ հետազոտության: Ունենք 26 վերգետնյա և 39 ստորգետնյա անցում և 42 կամուրջ: Վերոնշյալ ցանկում ընդգրկված չեն գետերի և ջրանցքների վրայով անցնող թունելային կառույցները: Ներկայումս գրում ենք տեխնիկական առաջադրանքը, կհայտարարենք մրցույթ և Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեում կհատկացվի ուսումնասիրության համար գումար: Ուսումնասիրությունից հետո կդիմենք մասնագիտացված կառույցին: Հայաստանի ճարտարապետաշինարարական համալսարանն այդպիսի կառույցների համար ստեղծելու է անձնագիր:

Վստահ եմ, որ Երևանի քաղաքապետի աջակցությամբ աշխատանքները կիրականացվի կարճ ժամկետում՝ արագ և որակով:

Արամ Թորոսյան

-Շնորհակալություն պատասխանի և կոնցեպտուալ մոտեցման համար:

Հավելեմ, որ երևի մոտ 5-7% շինհրապարակներում է ապահովված հետիոտնի համար անվտանգ շրջանցիկ ճանապարհ: Խնդրում եմ սա լինի պարտադիր պայման շինհրապարակների կազմակերպման համար:

Կցանկանայի Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամների, վարչական շրջանի ղեկավարի կամ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների և պարոն Կամո Արեյանի մասնակցությամբ այցելենք Սարի թաղ: Սարի թաղում կան շատ խնդիրներ՝ տեղի է ունեցել փլուզում: Այդ փլուզված հատվածը դեռևս առկա է և վտանգավոր է:

Սարի թաղում կատարվել է հասարակական տրանսպորտի փոփոխություն, ինչպես նաև իմացա, որ մանկապարտեզը պետք է այս տարի վերոնորոգվի:

Սարի թաղում հետիոտնի համար նախատեսված մայթեր չկան և երեխաները դպրոց են հաճախում փողոցով: Պետք է մտածել և լուծել այս խնդիրները:

Կարծում եմ, որ Նորագյուղ թաղամասից ոչ պակաս հեռանկարային թաղամաս է հանդիսանում Սարի թաղը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Թորոսյան, առաջարկի համար: Պարբերաբար կատարել ենք այցեր և բնակիչների կողմից բարձրաձայնվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, բարձրացվել էր հասարակական տրանսպորտի հարցը: Ներկայումս հին շարժակազմը փոխարինվել է նոր ավտոբուսներով:

Համաձայն եմ, որ Սարի թաղում խնդիրները շատ են: Սարի թաղում խնդիրները վերաբերում են նաև ստորգետնյա ջրերին, որոնք ավելի մեծ մասշտաբի են, քան Մուշական թաղամասում առկա խնդիրները: Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի հետ պարբերաբար այցեր ենք կատարել: Խնդրի լուծման համար մոտավորապես անհրաժեշտ է տասնչորս կամ տասնհինգ միլիարդ ՀՀ դրամ:

Համաձայն եմ Ձեզ հետ, որ կառուցապատման հեռանկարներով Սարի թաղն որևէ այլ թաղամասի չի զիջում: Հաջորդիվ պետք է զբաղվել Սարի թաղի ներդրումային ծրագրով: Սարի թաղում առկա խնդիրները հնարավոր է լուծել մեծ, կապիտալ ներդրումային ծրագրի շրջանակներում: Սարի թաղում կատարել տասնհինգ միլիարդ ՀՀ դրամի ներդրում և լուծել միայն ստորգետնյա ջրերի հարցը, մեծ դժվարությամբ է լինելու հիմնավորել՝ քանի որ առաջ կգան ավելի առաջնահերթ հարցեր՝ կոյուղու, անձրևատար համակարգերի և նոր ճանապարհների կառուցման վերաբերյալ: Կառուցապատման նախագծի վերաբերյալ առաջարկներ ունեցել ենք: Վստահ եմ, որ հետագայում սա կդառնա քաղաքային զարգացման ծրագրերից մեկը:

Արամ Թորոսյան

-Դպրոցի փլուզման վերաբերյալ չիմացա թե ի՞նչ է տեղի ունեցել:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ պարզաբանում կներկայացնի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

Հակոբ Բալայան

-Պարոն Թորոսյան, պատվիրվել է նախագիծ: Հենապատը մեծ չափերի է և տրակտորի հարվածից այն փլուզվել է ու ընկել դպրոցի տարածք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Քրիստինե Վարդանյան, խնդրեմ:

Քրիստինե Վարդանյան

-Հարգել՛ գործընկերներ, ուզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել երկու խնդրի վրա, որոնց լուծման համար ինձ դիմել են մի խումբ քաղաքացիներ: Որքան էլ երկու խնդիրը վերաբերում է երեխաներին, ամեն դեպքում ես կարծում եմ, որ մեծահասակներին ևս վերաբերում է:

Առաջին խնդիրը հետևյալն է. Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոցի վերջնամասում՝ ձիարշավարանից դեպի Աէրացիա թաղամասի սկիզբ տանող հատվածում, մեքենաների երթևեկությունն անվտանգ չէ, այսինքն՝ չկան տեսախցիկներ, արագաչափեր և փողոցն անցնելու համար գծանշումներ: Այդ փողոցի վերջնամասում՝ խաչմերուկի հատվածում, գտնվում է սուպերմարկետ: Մայթեր չկան, մի հատվածում մայթերն անբարեկարգ վիճակում են, մի մասում ընդհանրապես մայթեր չկան: Խնդիր է առաջանում երեխաների՝ այդ տարածքում գործող միակ սուպերմարկետ այցելելու և դպրոց հաճախելու համար: Փաստացի, երեխաները փողոցով են գնում: Այդ խաչմերուկը հայտնի է մշտապես ավտովթարներով, կարելի է ասել, որ լուսավորություն նույնպես չկա և ծնողների մտահոգությունն է՝ ողբերգություն չունենալու համար լուծումներ առաջարկել, որպեսզի երեխաներն անվտանգ գնան խանութ և դպրոց: Ի՞նչ ժամկետներում է կարելի է այդ լուծումները տալ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Հետիոտնային անցում կազմակերպելու հետ կապված առաջիկա շաբաթվա ընթացքում քննարկումներ կիրականացնենք, կհամաձայնեցնենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ, եթե դրական կարծիք լինի՝ անվտանգ երթևեկության կազմակերպման համար կփորձենք իրագործել,

իսկ գծանշումներն առաջիկայում կկատարվեն:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ, կատարված աշխատանքի և առաջացած խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը գրավոր կներկայացնեք ավագանու անդամ Քրիստինե Վարդանյանին:

Քրիստինե Վարդանյան

-Շնորհակալություն, ես ինքս էլ կարող եմ Ձեզ հետ այցելել և ցույց տալ, թե որ հատվածում է գտնվում:Երկրորդ հարցս հնչեցնեմ. ինձ են դիմել Կասկադ համալիրի հարակից տարածքի բնակիչները: Կասկադի վերին հատվածի համար կա հիանալի նախագիծ, բայց մինչ այդ նախագծի իրագործումը կա խնդիր: Վերևի հատվածը նախկինում լուսավորված է եղել և անվտանգության աշխատակից է եղել: Այժմ, ես ինքս այցելել եմ այդ տարածք, լուսավորություն չկա և մութ ժամանակ մարդիկ վախենալով են իջնում այդ աստիճաններով: Երբ ես այնտեղ էի, այդ վերևի հատվածի դիտակետում դպրոցականները բարձրացել էին պատի վրա՝ քաղաքը դիտելու համար, որը շատ վտանգավոր էր: Ես ինքս եմ միջամտել, խնդրել եմ, որ իջնեն այդտեղից: Հաշվի առնելով թե ինչքան բարձր է այդ հատվածը, ողբերգությունը կարող է անխուսափելի լինել: Խնդրում եմ ձեռնարկել միջոցներ այդ հատվածի լուսավորության համար և որպեսզի անվտանգության աշխատակից կամ ոստիկան հսկի այդ տարածքը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն տիկին Վարդանյան, Կասկադի վերին հատվածի հետ կապված մենք մի քանի ծրագիր ունենք: Առաջինը՝ Նյու-Յորքի ճարտարապետ Դևիդ Հոդսոնի նախագիծն է, որը դեռևս 2007-2008թթ. էր ներկայացվել: Այդ նախագծով տրվել էր ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինթույլտվություն: Շինարարությունը սկսվել էր իրականացվել, հետո՝ միջազգային ֆինանսական ճգնաժամով պայմանավորված, Գաֆէսճեանների ընտանիքը դադարեցրել էր շինարարությունը:

Երկրորդ նախագիծը ճարտարապետ Ժան Միշել Վիլմոտի և իր ընկերության կողմից ներկայացված նախագիծն է: Ժան Միշել Վիլմոտը հայտնի ֆրանսիացի ճարտարապետ է, ով իրականացնում է ծրագրեր ամբողջ աշխարհում և մեզ համար իրականացրել է նաև Նորագյուղ թաղամասի գլխավոր հատակագծումը: Կարծում եմ Կասկադ համալիրի հետագա նախագծերի որոշման հարցում շատ կարևոր է, թե ինչ կարծիք են ունենալու երևանցիները: Ես կարծում եմ, որ ինչ-որ մի փուլում, երբ ունենանք ամբողջական փաթեթներ, դրանք դնելու ենք հանրային քննարկման: Ինչ վերաբերում է լուսավորությանը՝ խնդրում եմ «Երքաղլույս» ՓԲԸ տնօրեն Անդրանիկ Թևոսյանին վարչական շրջանի ղեկավարի հետ ուսումնասիրել խնդիրը և գտնել միջանկյալ լուծումներ:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսինե Սարգսյան, խնդրեմ:

Լուսինե Սարգսյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է Երևան քաղաքի արտաքին կապերի միջազգային համագործակցության ընդլայնմանը, խորացմանը և բովանդակային վերանայմանը: Այսինքն՝ մեր միջազգային գործընկերների, քույր քաղաքների հետ հուշագրի ստորագրումից անցումը միգուցե երկարաժամկետ ռազմավարական համագործակցության, ինչն ամրագրված է նաև զարգացման հնգամյա ծրագրում: Հարցն առաջացավ, երբ մասնակցեցի հայ-ամերիկյան համաժողովին և որին ներկա էին բարձաստիճան պատվիրակություն և օրակարգում ընդգրկված էր Տեղական ինքնակառավարման մարմնի շրջանակներում համագործակցությունը: Հաշվի առնելով ամերիկյան լավագույն փորձը թե՛ կառավարման բոլոր մակարդակներում, թե՛ տնտեսության ոլորտներում և հաշվի առնելով իրենց պատրաստակամությունը, տեղին կլինի, որ մենք մտածենք երկարաժամկետ ռազմավարական համագործակցություն մեր ամերիկացի գործընկերների հետ: Կցանկանայի իմանալ Ձեր դիրքորոշումն այս համագործակցության վերաբերյալ և արդյոք կտրվեն հանձնարարականներ որոշակի նախագծերի շուրջ իրական ծրագրերի համագործակցային մեկնարկի մասին:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն, տիկին Սարգսյան, մենք չենք ցանկանում որևէ դատարկ փաստաթուղթ ստորագրել որևէ երկրի գործընկերոջ հետ և այն հուշագրերը, որ այժմ քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության հետ քննարկում ենք, հիմնականում թիրախային են և կոնկրետ ծրագրեր են նախատեսում: Այնքան չի կարևորվում քույր քաղաք լինելու կոչումը, որքան բովանդակությունը, որ այդ համագործակցությունը մեզ կտա: Մենք ունենք քաղաքներ կամ կառույցներ, որոնց հետ համագործակցում ենք շատ կոնկրետ ծրագրերով և նրանց հետ այդ կարգավիճակը չունենք: Հետևապես, մենք շատ կոնկրետ ծրագրեր ունենք, որոնք ներկայացնում ենք մեր տարբեր գործընկերներին և այդ ծրագրերի մասին միշտ պատրաստ ենք եղել խոսել, քննարկել, առաջարկել: Մենք միանշանակ կողմ ենք հավելյալ համագործակցության էջեր բացելուն, բայց եթե խոսքը վերաբերում է շատ կոնկրետ ծրագրերի՝ ժամանակ չվատնելու տրամաբանությամբ:

Լուսինե Սարգսյան

-Շնորհակալություն, հաշվի առնելով թե՛ վերջին շրջանում տեղի ունեցող իրողությունները, թե՛ համաժողովի արդյունքները, այս դեպքում ամերիկացի գործընկերները կոնկրետ գործնական առաջարկներ ունեին և ես սիրով ու իմ ամբողջ ներուժով կներգրավվեմ այդ համագործակցությանը: Հուսով եմ ամերիկյան նորարարական տեխնոլոգիաների վերջին լուծումները մեզ կաջակցեն մեր քաղաքի կառավարման գործում:

Տիգրան Ավինյան

-Շատ ողջունելի է:

Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Շնորհակալություն պարոն Ավինյան, ես երկու հարց ունեմ: Նշեմ, որ ես բոլոր վարչական շրջաններ այցերով շատ եմ լինում: Վերջերս նկատեցի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «հայտնի շատրվանները», որոնց հետ կապված անընդհատ աշխատանքներ էին իրականացվում և չէր ստացվում: Հիմա ինչպես հասկացա «Դավիթ Անհաղթ» պուրակն արդեն պատկանում է Երևան քաղաքին և այն իմ կարծիքով ունի շատ գեղեցիկ նախագիծ, բայց այս մասով կա խնդրահարույց հարց, որը Երևանի քաղաքապետարանի գործունեության շրջանակներում լուծել չի լինի, առաջարկում եմ այդ հարցով համագործակցել ՀՀ կառավարության հետ:

Նշեմ, որ այդտեղ վերևում կա 2 շինություն-կառույց, որոնք պետք է կրկին վերադարձվեն մեր քաղաքին և այդ պուրակի հարցը վերջապես լուծվի: Խոսքը գնում է 3.000.000 դոլլարի մասին, չեմ ուզում շատ մանրամասնեմ, բայց հուսով եմ Ձեզ կտեղեկացնեն այդ խնդիրն ինչպես կարելի է լուծել:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ, շնորհակալ եմ պարոն Ավագյան, ցանկանում եմ այգու հետ կապված մի քանի մոտեցումների մասին բարձրաձայնել: Մեր հիմնական նպատակն է հանրային կանաչ տարածքներում, այգիներում վերականգնել մարդկանց համար հարմար միջավայր: Մասնավորապես, այգիներն ազատել տարատեսակ հին շինություններից և նմանատիպ ծրագրեր իրականացվում են տասնյակ այգիներում:

Հարգելի՛ գործընկերներ, ենթադրում եմ նաև որ տեսանելի է, թե ինչ աշխատանքներ են իրականացվում երևանյան բակերում՝ տարբեր շինությունների, ավտոկայանատեղիների փոխարեն կառուցվում են մանկական խաղահարապարակներ, ֆուտբոլի դաշտեր, կանաչ տարածքներ: Այսինքն, մեր մոտեցումն այս առումով ունիվերսալ է՝ Երևան քաղաքն ավելի հարմար դարձնելու համար:

Կխնդրեի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանին հարցի հետ կապված պարզաբանումներ ներկայացնել:

Արտակ Հովակիմյան

-Պարոն Ավագյան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Դավիթ Անհաղթ» պուրակի հետ կապված ցանկանում եմ տեղեկացնել, որ 2022թ. աշխատանքներ է կատարվել, որպեսզի պուրակը փաստաթղթաշրջանառությամբ հետ վերադարձվի Երևան համայնքին: Պուրակն այդ 2 տարվա ընթացքում իրականում աղբանոցի էր վերածվել: Այն բաղկացած է եղել 2 մասից՝ պուրակի հատվածը տրված է եղել վարձակալությամբ, իսկ

վերևի հատվածի՝ Ձեր կողմից նշված շինությունները հանդիսանում են ինչ-որ սահմանափակ պատասխանատվության ընկերության սեփականություն և պուրակը գրավադրված է եղել ինչ-որ բանկում:

Պարոն Ավինյանի հանձնարարությամբ 2024թ. արդեն խորապես ուսումասիրեցինք պուրակի հետ կապված հարցը և այն վերադարձրեցինք Երևան համայնքին: Հիմա այնտեղ բարեգործական հիմունքներով աշխատանքներ են իրականացվում: Նշեմ, որ այդ աշխատանքների հետ միասին զբաղվում էինք պուրակի հետվերադարձ փաստաթղթաշրջանառության հարցերով, այդ պատճառով էլ որոշակի ժամանակահատված լայնածավալ աշխատանքներ չեն իրականացվել: Այս պահին լայնածավալ աշխատանքներն իրականցվում են և հույս ունենք, ի ուրախություն մեր ժողովրդի, որ մոտավորապես մինչև տարեվերջ պուրակի հետ կապված աշխատանքները կավարտվեն: Պուրակի վերևի հատվածի շինությունների հետ կապած էլ հետագայում պարզ կլինի, թե ինչ կկատարվի:

Վահան Ավագյան

-Պարոն Ավինյան, երկրորդ հարցս էլ հնչեցնեմ և ցանկանում եմ նաև դրա լուծումն էլ առաջարկեմ: Անդրադառնալով ճանապարհների կառուցման, վերակառուցման, աշխատանքների թերացումներին, ցանկանում եմ նշել, որ դրա հետևանքով տուժում են վարորդները: Վերջիններս բազմիցս ինձ են դիմել այս հարցերով. օրինակ՝ երթևեկելիս, մեքենան ընկել է փոսի մեջ, որի հետևանքով վնասվել է մեքենայի անիվները: Վարորդները հարցնում են թե ի՞նչ պետք է անել, ես պատասխանում եմ, որ փորձենք հարցը լուծել Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ և այստեղ կանգնում ենք փակուղու առջև: Սրա պատճառն այն է, որ օրենքը թույլ չի տալիս, որ Երևանի քաղաքապետարանը հատուցի իր թերի աշխատանքի հետևանքով առաջացած քաղաքացու վնասը: Միակ տարբերակը մնում է դիմել դատարան, «Հանրային ձայն» խմբակցությունը տեղյակ է, թե դատարաններում ինչպես են լուծվում այս հարցերը: Այդ պատճառով առաջարկում եմ Ձեր և իրավաբանական վարչության պետի հետ քննարկել և կազմել նախագիծ, ըստ որի՝ Երևանի քաղաքապետարանի միջոցներով կարող ենք փոխհատուցել մեր սիրելի երևանցիների վնասները:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն հնչեցված հարցի համար պարոն Ավագյան: Նշեմ, որ Երևանի ճանապարհային ցանցն ահռելի մեծ է և այդ նպատակով նոր մեթոդներ և ծրագրեր ենք իրականացնում: Մասնավորապես, իրականացնում ենք միջին նորոգման ծրագրեր, որոնք նախկինում չեն իրականացվել և հիմնականում բոլոր աշխատանքներն եղել են փոսալցման աշխատանքների շրջանակներում: Նշեմ, որ այս տարի Երևան քաղաքում, աննախադեպ էին բացառիկ ծավալով անձրևները, որն էլ ավելի է վատթարացրեց աշխատանքը: Ասեմ ավելին՝ նախորդ տարի նաև խնդիր ենք ունեցել կապված ճաքալցման աշխատանքների

հետ: Սրանք արդարացումներ չեն, բայց, այնուամենայնիվ, Երևանում կան և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ ճանապարհների իրավիճակի հետ կապված, որը ես վստահ եմ, որ այս տարի էականորեն կփոխվի: Հետևապես, Դուք, իհարկե, կարող եք այս հարցը պարոն Մարգարյանի հետ քննարկել, բայց ես կարծում եմ, որ մեր ֆունդամենտալ խնդիրը, ոչ թե Ձեր կողմից մատնանշված լուծումները փնտրելու մեջ է, այլ բուն ճանապարհային ամբողջ ցանցի արդիականացման և համապատասխան որակի բարձրացման հարցն է:

Վահան Ավագյան

-Պարոն Ավինյան, հարցս չավարտեցի, ցանկանում եմ նշել, որ 2020թ. Երևանի քաղաքապետարանում եղել է 1-08 ծառայություն, որն ինչքանով տեղյակ եմ լուծարվել է: Ներկայումս այդ մասով գործառույթն իրականացվում է 1-05 ծառայության կողմից, որը հասանելի է քաղաքացիներին աշխատանքային օրերին՝ ժ.09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածումը: Այս դեպքում երևանցիներն աշխատաքային ժամերից դուրս և շաբաթ-կիրակի օրերին իրենց անհանգստացնող հարցերով չգիտեն, թե ում դիմեն:

Խնդրում եմ այս հարցին էլ ուշադրություն դարձնել:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ պարոն Ավագյան:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գևորգ Ստեփանյան, խնդրեմ:

Գևորգ Ստեփանյան

-Խնդրում եմ հստակ պատասխանեք ու նշեք, թե ե՞րբ է մեր խմբակցության կողմից ներկայացված տրանսպորտի թանկացման դեմ նախագիծն ընգրկվելու Երևանի ավագանու օրակարգ: Սա առաջին հարցն է, իսկ երկրորդ՝ վերաբերում է Երևանում գործող ստորգետնյա և վերգետնյա անցումներին /մասնավորապես՝ Տ.Մեծի պողոտայի, Գ.Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ փողոցի և Մաշտոցի պողոտայի հարակից գետնանցումներ/:Նշված բոլոր գետնացումների սալիկները թափվում են և տիրում է գարշահոտություն:

Ե՞րբ եք կարգի բերելու անցումները, որպեսզի մեր քաղաքացիները կարողանան նորմալ տեղաշարժվել:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ պարոն Ստեփանյան, Ձեր կողմից մատնանշված առաջին հարցին ես արդեն մի քանի անգամ պատասխանեցի բոլոր դիտանկյուններից և՛ բովանդակային և՛ ժամանակացուցային: Ձեր խմբակցության կողմից ներկայացված տրանսպորտի թանկացման դեմ նախագիծը համապատասխան ժամկետների սահմաններում անպայման կընդգրկվի օրակարգ և կքննարկվի ավագանու նիստի ընթացքում:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից հնչեցված գետնանցումների հետ կապված հարցին՝ այս տարի քննարկում ենք, թե ինչպես պետք է լուծել գետնանցումների հարցը և

առհասարակ ամեն մի գետնանցման խնդրի լուծման հարցն ունի իր տրամաբանությունը: Այստեղ ունենք անշարժ գույքի կառավարման հնարավորություն, այսինքն ունենք տարբերակներ, որ իրականացնելու ենք ներդրումային կառավարման ծրագրով, ինչպես իրականացվել է Դիանա Աբգարի զբոսայգու հարակից գետնացման դեպքում: Ունենք գետնանցում, որ ենթադրվում է, որ որոշ չափով դառնալու է կայանատեղի, քանի որ որոշ փողոցներ ունենալու են երկկողմանի ավտոբուսային գծեր և այդտեղ կայանման հնարավորությունները նվազելու են: Այստեղ որպես այլընտրանք առաջարկելու ենք գետնանցման վերակահավորումն որպես ավտոկայանատեղի: Կա նաև ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիներ կառուցելու ծրագիր, եթե չեմ սխալվում Աբովյանի պուրակում, կան նաև մի քանի առաջարկներ Շահումյանի անվան հրապարակում՝ ստորգետնյա ավտոկայանատեղիի կառուցման վերաբերյալ: Մնացյալ բոլոր գետնացումների կառուցման աշխատանքները պետք է լինի որոշակի ներդրումային տրամաբանությամբ՝ մասնավորի հետ մրցույթի կազմակերպման արդյունքում:

Գևորգ Ստեփանյան

-Ցանկանում եմ հայտնել, որ մեր խմբակցության կողմից ներկայացված տրանսպորտի թանկացման դեմ նախագծից բացի կան նաև այլ նախագծեր, որոնք օրակարգ չեն ընդգրկվել:

Տիգրան Ավինյան

-Կխնդրեի աշխատակազմի կազմակերպական վարչությանը՝ տեղեկացնել գործընկերներին ժամկետների վերաբերյալ:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 5-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց՝
Կազմակերպական վարչություն